Է. ՏԱՐԻ 1911 — ԹՈՒՄԱԿԱՆ ՀԱՅՈՑ 23 ՄԱՐԵՐԻ 4382 — Հ. Տ. 30 ՄԱՅԻՍ 1890 — Ն. Տ. 11 ՅՈՒՆԻՍ 1890 — ՀԻՋՐ. 24 ՇԷՎ ՎԱԼ 1307 — ՁՈՐԵՔՇԱԲԹԻ

20 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՐԵՆ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Գալաթիա, Նորատունկեան-խան

درعليه‌ده غلطه‌ده نورادونكيان خانده آره‌وك
غزته‌سى اداره‌سنه

Direction du Journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար Տարեկան գանձման արժէքը	160
» » Վեցամսեայ » »	80
» » » »	40
Դուրս » »	200
» »	100
Ամսեայ »	56
» »	28
Գիւղ	[illegible]
Եւրոպա	[illegible]

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 30 ՄԱՅԻՍ, 1890

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԵՄԵՐ ԵՒ ՎԱՆՔԵՐ

Եգիպտոսի առաջնորդ Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան վերջնապէս կը հրաժարի։ Նապին Գարահիսարի առաջնորդ ընտրուած Գրիգորիոս եպիսկոպոս Ագէպեան կը հրաժարի։ Արապկիրի առաջնորդ Եղնիկ եպիսկոպոս Ապահունի կը հրաժարի։ Իզմիրի նորընտիր առաջնորդ Ներսէս վարդապետ Ասլանեան վերջնապէս կը հրաժարի։ Ռոտոսթոյի առաջնորդ ընտրուած Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեան ևս կը հրաժարի, չդիտենք քանիերորդ անգամ լինելով։ Տրապիզոնի նորընտիր առաջնորդ Մելքիսեդեկ եպիսկոպոս Մուրատեան պաշտօնական եռանդի կողմէ կը մրցի վերոյիշեալներուն հետ, և ինքն ալ կը հրաժարի։ Հալէպի առաջնորդ Կէօմիւրճքեան վարդապետ պաշտօնավարէն կը հեռացուի Կիլիկիոյ կաթողիկոսին պահանջմամբ, կ'երեւի թէ դրամական խնդրոյ մը պատճառաւ։ Եթէ չենք սխալիր, Բարբերդի առաջնորդ Շիշմանեան Ղեւոնդ եպիսկոպոսն ևս Պատրիարքարանը դեռ ևս կ. Պոլիս կը կանչէ։

Այս բոլոր առաջնորդք խօսք մէկ ըրած չեն հարկաւ. բայց պարագայք և հանգամանք խօսք մէկ ըրած կը թուին՝ այս ամէն հրաժարականները միեւնոյն ժամանակ յառաջ բերելով զգացնելու կարեւորութիւնն Պատրիարքական Մըրագրին ի մասին թեմերու և վանքերու վերակազմութեան, — Մրագիր որոյ հիմնական սկզբունքն արդէն բացատրեցինք նախընթաց երկու յօդուածներով, և որոյ ուշադրաւ տրամադրութեանց վրայ մեր ուսումնասիրութիւնը կ'ուզենք շարունակել այս երրորդ յօդուածով։

* * *

Ս. Պատրիարք Հայրն առաջնորդաց ընտրութեան և հրաժարման պարագայները սահմանելէն ետքը, խնդրոյն նիւթական կողմին կ'անցնի, և կը տնօրինէ թեմական եպիսկոպոսին հաստիքներն։ Իրրեւ նիւթական չոր խնդիր արհամարհելու չէ Մրագրոյն այս մասն. որովհետեւ եթէ առաջնորդք կը հրաժարին և թեմեր երեսի վրայ կը մնան, շատ անդամ նիւթական պատճառաւ է միայն, որոյ մասին առաջնորդք և թեմականք իրենց փոխադարձ իրաւունքներն ու պարտաւորութիւններն անտես կ'ընեն։ Առաջնորդին հաստիք, ըստ Պատրիարքական Մրագրին, են Ա. Այն անորոշ և անպայման նուէրներ զորս ժողովուրդը բարեպաշտութեամբ և յօժարակամ սիրով կուտայ, ինչպէս պատարագուց, և նմանք։ Բ. Աթոռային իրաւունք՝ գանձելի նշանագրութեան և պսակադրութեան ժամանակ։ Գ. Մէն մի թեմական ընտանիքէ գանձելի վեց դահեկանի տուրք։ Առաջնորդք իրենց հաստիքէն կը վճարեն Պատրիարքարանին յատկացեալ «Մուգաթա» տուրքն առ մէն մի ընտանիք մէկ ղրուշ, որով իրենց բուն իրաւունքը կը մնայ հինգ ղրուշ առ մէն մի ընտանիք։ Վիճակագրելու քաղաքի առաջնորդարանի շինութիւն, կահաւորում, դիւանական ծախք առաջնորդական հաստիքէն չպիտի հոգացուին, այլ քաղաքացիք պէտք է հոգան, «ի փոխարէն այն սահմանադրական իրաւանց որով վիճակային երեսփոխանութեան համար անդամոց թուոյն երկու երրորդ մասը քաղաքացիք կ'ընտրեն»։

Շատ իրաւամբ կը պահանջէ Ս. Պատրիարք Հայրն որ «առաջնորդը տարին անդամ մը այցելութիւն տայ վիճակին ժողովրդեան, կամ գէթ երկու տարին անդամ մը այցելութիւն տայ անպատճառ, եթէ այնչափ ընդարձակ է վիճակն որ չկրնար հասնիլ»։— Այլի առջեւ բերելով Թուրքիոյ Հայոց ընդարձակագոյն թեմերն, ինչպէս Վան, Սեբաստիա, Կարին, Բարբերդ, Եդեսիա, չենք հասկնար թէ ո՛յք են այն թեմեր զորս առաջնորդը գէթ տարին մէկ անդամ ծայրէ ի ծայր շրջելու կարող չլինի։ Ս. Պատրիարք Հայրը գործը շատ հանգիստ կը բռնէ առաջնորդաց համար, անշուշտ այն մտածմամբ թէ շատ վիճակներ այժմ երկու տարին անդամ մ'ալ առաջնորդի երես տեսած չունին։ Դաւառական թղթակցութեանց մէջէն դիպած ենք սրատարած նամակներու յորս կը գրուի թէ «Գիւղերկան որոց ժողովուրդը կը դանդատի թէ տասն տարիէ հետէ առաջնորդի երես չէ տեսած»։ Այս տեսակ վիճակներու համար Ս. Պատրիարք Հօր Մրագիրն անակնկալ բարիք մը կրնայ լինել։

Առաջնորդն, իւր անձնական այցելութիւններէն զատ, Աստուծոյ խօսքը քարոզելու, ժողովրդեան պիտոյից տեղեկանալու, եկեղեցեաց և դպրոցի կալուածոց վիճակին հաշիւները տեսնելու, եկեղեցեաց մաքրութեան եւ ծիսական բարեկարգութեան հսկելու համար իւր կողմէ չհասած տեղերը վարդապետ, և եթէ վարդապետ չկայ՝ առաջնորդանիստ քաղաքի ձեռնհաս քահանայներէն մին պարտի շրջեցնել։

Առաջնորդարանի ծախսուց տնօրինումը քաղաքացեաց վրայ դնելով, Ս. Պատրիարք Հայրն հետեւեալ օրինաւոր նկատումներն ի մէջ կը բերէ, ի պաշտպանութիւն գիւղացւոց.

«Նկատելի է՝ որ գիւղերն բաղդատմամբ քաղաքաց աւելի ծախքեր ունին։ Նախ՝ որ գիւղերը կեդրոնէն հեռի ըլլալով արքունի տրոց գանձման և հատուցման մասնաւոր ծախք ունին. երկրորդ՝ գիւղացւոյն տնտեսական կեանքը աւելի ծախքեր ունի՝ զոր քաղաքացին չունի, կամ եթէ ունի՝ իւր արուեստին կամ վաճառքին վրայ դնելու պատեհութիւնն ունի զոր գիւղացին չունի. երրորդ՝ գիւղերը փոքրաթիւ բնակիչներէ բաղկանալով՝ կրօնական և կրթական պիտոյից համար համեմատաբար աւելի ծախքեր ունին քան քաղաքացիս. չորրորդ՝ գիւղերն իրենց մերձակայ վանքերուն պտղի ըսուած տուրք մը կուտան, մինչդեռ քաղաքացիք իրր թէ պտուղ, այսինքն ցորեան, գարի, անասուն ևն. չունին՝ բան մը չեն տար. հինգերորդ՝ գիւղացիք առաջնորդին այցելութեան ատեն կերակրոյ և երթեւեկի ծախքը կուտան, մինչդեռ քաղաքացիք այս ծախքն ալ չունին. վեցերորդ՝ գիւղացիք իրենց ժամատունը կը շինեն, կը կահաւորեն։ Ինչո՞ւ ուրեմն քաղաքացիք իրենց առաջնորդարանը չշինեն, չկահաւորեն, եւ թղթակցութեանց դիւանին ծախքերը իրենք չհոգան։»

* * *

Թեմերէն անցնելով վանքերուն, իբրեւ տրամաբանական հետեւութիւն իւր ցայսօր դրած սկզբանց, Ս. Պատրիարք Հայրը կ'ըսէ թէ վանքերուն իսկապէս վանահարք թեմական եպիսկոպոսներն են, բացարձակ հոգեւորական գլուխ վանական միաբանից, Վանքին և թեմին մէջ ձեռնադրելի ամէն եկեղեցականք և աստիճանաւորք թեմական եպիսկոպոսէն ձեռնադրութիւն և աստիճան կ'ընդունին։ Առաջնորդ-վանահայրն իւր կողմէ վանքին մէջ փոխ-վանահայր մը կ'ունենայ, միաբանից մէջէն։ Վանքին մատակարարութիւնը կը պատկանի Միաբանութեան, ի ձեռն տնօրէն ժողովոյ, որ կ'ընտրուի Միաբանութենէն, և կը հաստատուի թեմական եպիսկոպոսէն։ Քանի որ թեմական եպիսկոպոսը կ'առնուի մատակայ վանքին Միաբանութեան մէջէն, և քանի որ այս Միաբանութիւն իւր ստորագրութեամբ կը մասնակցի առաջնորդին եպիսկոպոսացման, ուրեմն առաջնորդ-վանահայրը թէ՛ թեմէն և թէ վանքէն ընտրուած կրնայ համարուիլ, որով կը գոհացուի Սահմանադրութեան 48րդ յօդուածը, տրամադրող թէ վանահայրը վանքին Միաբանութենէն ընտրուի։

Վանքին մատակարարութեան համար փոխադարձ «Դրդուիլ դրութիւն մը կը սահմանէ Պատրիարքական Մրագիրը՝ տրամադրելով թէ վանական մատակարարութեան հաշիւը Միաբանութեան ընդհանուր ժողովէն քննուելէ և վաւերացուելէ յետոյ, երբ թեմական եպիսկոպոսն իւր հաւանութիւնն յայտնէ՝ ստորագրէ իւր պատասխանատուութեան ներքեւ, և երկու օրինակ պատրաստելով, մին ի Պատրիարքարան ղրկէ, միւսն ալ գաւառական երեսփոխանական ընդհանուր ժողովոյն։

Եթէ մինչեւ վեց ամիս դիտողութիւն չգայ գաւառական ժողովէն, Պատրիարքարանը կը վաւերացնէ վանքին հաշիւն, և կը վերադարձնէ առաջնորդ-վանահայրն։ Սա իրաւունք չունի բան մ'առնուլ վանական հաստատէն իւր անձին կամ թեմական պաշտօնին համար։ Վիճակէն գանձելի պտղի անուամբ տարեկան նուէրին հաւաքման և ուխտաւորաց յաճախմամբ վանքին պայծառացման մեծ ուշադրութիւն պարտի ընել առաջնորդ-վանահայրն՝ ի շինութիւն, ի հարստութիւն և ի բարեզարդութիւն վանքին։ Թեմական եպիսկոպոսին աշխատութեան փոխարէն, վանքերն ալ պէտք է ծառայեն նոյն թեմին կրթեալ և ուսեալ ժիր վարդապետներ, քահանայներ և վարժապետներ յարուցանելու, և պատսպարելու այնպիսի քահանայներ և սարկաւագներ որք ապաշխարութեան համար վանք ղրկուին։

Երբ վանք մը այս բարձր նպատակին ծառայելու չափ բաւականութիւն չունենայ, վանքին հասոյթք գանձուին եպիսկոպոսին կողմէ կարգեալ վանական վարդապետի մը և գաւառային Վարչութեան կողմէ կարգեալ հոգաբարձութեան մը ձեռամբ։ «Այս կարգի վանուց հասոյթք ո՛չ թէ քաղաքին վարժարանաց ծախքը գոցելու համար ծախսուելու են, այլ վիճակին Կրօնական ժողովոյն և Ուսումնական Խորհրդոյն տրամադրութեան ներքեւ պահուին, որպէս զի երբ նոյն վիճակին մէջ փոքրաթիւ բնակչաց անկարողութեան պատճառաւ դուրսէն քահանայ և վարժապետ վարձուի ասով վարձուի, որով ո՛չ մի գիւղ առանց քահանայի և վարժապետի մնայ»։

Ի բացատրութիւն այս տրամադրութեանց, Ս. Պատրիարք Հայրն հետեւեալ ուշագրաւ դիտողութիւնները կ'ընէ.

«Վանքին պահապան, վերակացու եւ մատակարար լինել վանականին իրաւունքն է։ Այս իրաւանց հակառակ՝ թեմերէն ոմանք աշխարհական տեսուչներ կարգած են վանքերուն. հետեւանքը այն եղած է՝ որ ժողովուրդը սկսած է ցրտանալ վանքին ողորմութիւն տալէ տեսնելով որ վանքին մէջ փոխանակ կրօնաւորի աշխարհական վերակացու կայ։ Դիտելի պէտք է՝ որ մեր ժողովուրդը վանքը կրօնաւորին եւ կրօնաւորը վանքին ապրանքն է դիտէ. վանքին բան մը նուէր տալուն մէջ կ'ենթադրէ թէ կրօնաւորին կուտայ. կրօնաւորին տալու ժամանակ նոյնպէս կենթադրէ թէ վանքին կուտայ.

«Թեմերուն մէջ այլ և այլ տեղեր վանքեր կամ կրօնական հաստատութիւններ կան, որոց հասոյթք մատակայ քաղաքացիք իրենց դպրոցաց ծախսուց կը գործածեն, և կոստանդնուպոլսոյ մէջ կազմեալ ընկերութիւնք, անգիտակ այն բնական պատրաստի յարմարութեանց, իրենց կոդմանէ վարժապետ կը վարձեն կը ղրկեն. Տնտեսութեան ամենէն յայտնի պայմաններուն հակառակ է՝ կեցած բարիքը ան տեսել և ի հեռուստ բռնավար ջանքեր ը նել։»

Վերջապէս, յանդուգն նորութիւն մը կ'ընէ Ս. Պատրիարք Հայրը՝ ծրագրելով թէ ո՛ր թեմին մէջ մէկէ աւելի վանք կայ, բոլորն ալ միացեալ նկատուին, և կառավարուին մէկ ընդհանուր միաբանական ժողովով և նոյն տնօրէն խորհրդով, ընդ դերիչխանութեամբ մի թեմական եպիսկոպոսի։ Թեմին մէջ գտնուած չատ մը վանօրէից բոլոր կրօնաւոր վարդապետք մէկ վանքի կրօնաւորներ ճանչցուին։

Այս տրամադրութիւն ո՛րչափ ևս սկզբամբ գովելի, բայց գործադրութիւնը նոյնքան դժուար կը թուի մեզ։ Նախ որ այն մնօք փորձ մը չէ եղած ցարդ, և երկրորդ զի մեծ թեմեր կան ուր վանքերը քանի մը աւուր ճամբայ հեռի են իրարմէ։

Երբ մէկ վանքի միաբանաց մէջ իսկ համաձայնութիւն չի հաստատուիր շատ անդամ, երբ յաճախ ցաւ ի սիրտ կը լսենք պառակտումներ մի և նոյն Միաբանութեան մէջ, ո՞չ ապաքէն դիւցազնական ճիգեր պէտք են քանի մը վանքերու միջեւ ճշմարիտ միաբանութիւն և համաձայնութիւն հաստատելու համար։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆՑ ԺՈՂՈՎ

Յայտնի է թէ 1867էն ի վեր Աւստրիոյ և Հունգարիոյ միջեւ երկեակ դրութիւն մը հաստատուած է Հապսպուրկեան Տէրութեան կառավարութեան համար։ Աւստրիա ինքնօրէն է իւր ներքին վարչութեան համար. Հունգարիա եւս՝ իւր ներքին վարչութեան համար. բայց երկուքն ընկերութիւն մը կը գործեն հասարակային պէտքերու համար, որք են բանակ, նաւատորմ, երկաթուղի կամ մաքսային դրութիւն, և արտաքին յարաբերութիւնք կամ դիւանագիտութիւն։ Աւստրիա և Հունգարիա ուրոյն խորհրդարաններ ունենալէ զատ, հասարակային խորհրդարան մ'ալ ունին իրենց հասարակային գործոց տնօրինութեան համար։ Այս հասարակային խորհրդարան սապէս կը կազմուի.— Աւստրիոյ Երեսփ. ժողովին իւր մէջէն գաղտնի քուէով կ'ընտրէ 40 անդամներ։ Աւստրիոյ Տիրակալն եւս նոյն կերպիւ 20 անդամներ կ'ընտրէ իւր մէջէն, և Աւստրիոյ այս վաթսուն ներկայացուցիչք կը կազմեն աւստրեան Պատուիրակութեան ժողովը։ Նոյն կերպիւ Հունգարիա կը կազմէ իւր Պատուիրակութեան ժողովը, վաթսուն անդամէ բաղկացեալ։ Այս երկու Պատուիրակութիւնք տարի մը Վիեննայի, յաջորդ տարին Փէշթայի մէջ կը գումարուին, լսելու արտաքին գործոց, պատերազմական և ծովային գործոց և ելմտական գործոց հասարակային նախարարներուն բացատրութիւններն, և վաւերացնելով կամ մերժելով նոցա խնդրած վարկերը։ Տէրութեան հասարակային ծախսուց համար պէտք եղած դրամին 100ին 70ը կուտայ Աւստրիա և միայն 30ն՝ Հունգարիա, որ ուրիշ ամէն բանի մէջ կը խօսի եւ կը գործէ իբրեւ կէս Հապսպուրկեան Տէրութեան, եւ երբեմն՝ աւելին քան դայս։ Աւստրիացիք անիրաւ կը գտնեն այս բաշխում, բայց Մաճառք դիւրադրդիռ ժողովուրդ են, դրամի խնդրոց մէջ մանաւանդ, և գանոնք չդժգոհացնելու համար, Վիեննայի կառավարութիւնը ձայն չի հաներ՝ ծախսուց աւելի արդար բաժանում պահանջելով։

Հասարակային ծախքերն այս տարի հետեւեալ կերպիւ ցոյց տրուած են Պատուիրակութեանց մատուցեալ ելմուտացոյցին մէջ.

Արտաքին գործոց նախարարութեան 4.768.700 ֆիորին. Պատերազմական 112.323.878. Ելմտական 2.012.600. Հաշուակալութեան գերագոյն ատեանին 126 հազար 712. Գումար 119.231.898 ֆիորին, որոյ վրայ բարդելով արտասովոր ծախքերը, գումարը կը հասնի 135.634.237 ֆիորինի։ Մաքսերէ և այլ հասոյթներէ գոյացեալ գումարները զեղչելով ծախուց գումարէն, կը մնայ 92.256.387 ֆիորին զուտ ծախք, յորմէ Աւստրիա կը վճարէ 63.287.881 ֆիորի. եւ Հունգարիա 27.123.377։ Այս ելմտացոյց խաղաղաւէտ է բոլորովին։ Արտասովոր ծախքերը չատ մեծ չեն։

Իւրաքանչիւր Պատուիրակութիւն առանձին կը գումարի, թէեւ նոյն քաղաքին մէջ, և իւր առանձին դիւանն ունի։ Նախաբարբ Աւստրիոյ Պատուիրակութեան ժողովոյն մէջ դերմանեերէն կը խօսին, և Հունգարիոյ Պատուիրակութեան մէջ՝ մաճառերէն։ Կայսեր դահաճառը՝ նմանապէս։

ՕՐՈՒԱՆ ԴԻՊԵՐԵՐՆ ԵՒ ՁՐՈՑՑՆԵՐԸ

Գերմանիա ամբողջ [illegible] թիւնք ի մեծագոյն ջանադրութիւն կը խրախուսեն Անգլիացիներն։ Անցեալ հինգշաբթի Լոնտոնի քաղաքային խորհրդարանին մէջ ազդեցիկ դէպք մ'տեղի ունեցաւ, նախագահութեամբ Կալլէսի իշխանին վեսին՝ Ֆայֆի դքսին, յորում որոշուեցաւ հանգանակութիւն կատարելով շոգենաւ մը գնել՝ Վիքթորիա Նիանզա լճին վրայ բանեցնելու համար։ Պ. Սթէնլի որ ներկայ էր, ըսաւ թէ Ափրիկէի մեծագոյն լիճն է այս և միակ լիճն որոյ վրայ շոգենաւ չի բանիր դեռ, մինչ շոգենաւային երթեւեկութիւնը բնիկներուն քաղաքակրթման մեծապէս կրնայ նպաստել, դիւրացնելով յարաբերութիւնները։

—Վիլհէլմ Կայսեր ի Բոսիէնիակ ապցելութեան առթիւ, պաշտօնապէս պիտի ծանուցուի եղեր նշանախօսութիւնն Կայսեր կրտսերագոյն դստեր՝ Մարկարիտա իշխանուհւոյն՝ ընդ Բրիստաի իշխանին, անդրանիկ որդի Դանիոյ գահաժառանգին։

—1889ին Սուէզի ջրանցէն անցած 3.425 նաւուց (տե՛ս երեկի Աբէ-Նէլ) 2 611ն անգլիական, 194ը գերմանական, 168ը ֆրանսական են. 146ն հոլանտական, 103ն իտալական. 54ն աւստրեան. 48ը նորվեկեան, 33ն սպանիական, 23ը ռուսական, 22ն օսմանեան, ութն եգիպտական, հինգն ամերիկեան, երեքը ճարոնական, մէկը չինական էին։

—Ի Փարիզ իրրեւ յեղափոխական ձերբակալեալ Ռուսերէն Օր. Ֆէտերոնա Բրասոնենի գէմ ոչինչ ապացուցուելով, արձակեցաւ։

—Անցեալ հինգշաբթի Լատինաց Ս. Հաղորդութեան Խորհրդոյ տօնը մեծաւ շքով կատարեցաւ ի Վիեննա։ Սովորական թափորը շրջեցաւ Աւստրիոյ ամէն քաղաքաց և գիւղերէից մէջ։ Կայսրն իւր գերդաստանին բոլոր արու անդամներով կը մասնակցէր Արքունեաց թափորին։ Ն. Վեհափառութիւն արքիդուքսերուն հետ Սրբոյն Ստեփանոսի մայր-եկեղեցին գնաց պալատական կառքերով, որոց վեցական կամ չորսական ձիեր լծուած էին։ Հետեւորդ պալատական պաշտօնեայք ժէ դարու համազգեստներով էին։ Աւստրիոյ կայսերապահ զօրքերէն զատ, հոյատեսիլ էին մանաւանդ մաճառ պահակազօրքն իրենց գեղաքաղաքացիս։ Հորրորդ՝ գիւղերն իրենց մերձակայ վանքերուն պտղի ըսուած տուրք մը կուտան, մինչդեռ քաղաքացիք իրր թէ պտուղ, այսինքն ցորեան, գարի, անասուն ևն. չունին՝ բան մը չեն տար. հինգերորդ՝ գիւղացիք առաջնորդին այցելութեան ատեն կերակրոյ և երթեւեկի ծախքը կուտան, մինչդեռ քաղաքացիք այս ծախքն ալ չունին. վեցերորդ՝ գիւղացիք իրենց ժամատունը կը շինեն, կը կահաւորեն։ Ինչո՞ւ ուրեմն քաղաքացիք իրենց առաջնորդարանը չշինեն, չկահաւորեն, եւ թղթակցութեանց դիւանին ծախքերը իրենք չհոգան։»

* * *

Թեմերէն անցնելով վանքերուն, իբրեւ տրամաբանական հետեւութիւն իւր ցայսօր դրած սկզբանց, Ս. Պատրիարք Հայրը կ'ըսէ թէ վանքերուն իսկապէս վանահարք թեմական եպիսկոպոսներն են, բացարձակ հոգեւորական գլուխ վանական միաբանից, Վանքին և թեմին մէջ ձեռնադրելի ամէն եկեղեցականք և աստիճանաւորք թեմական եպիսկոպոսէն ձեռնադրութիւն և աստիճան կ'ընդունին։ Առաջնորդ-վանահայրն իւր կողմէ վանքին մէջ փոխ-վանահայր մը կ'ունենայ, միաբանից մէջէն։ Վանքին մատակարարութիւնը կը պատկանի Միաբանութեան, ի ձեռն տնօրէն ժողովոյ, որ կ'ընտրուի Միաբանութենէն, և կը հաստատուի թեմական եպիսկոպոսէն։ Քանի որ թեմական եպիսկոպոսը կ'առնուի մատակայ վանքին Միաբանութեան մէջէն, և քանի որ այս Միաբանութիւն իւր ստորագրութեամբ կը մասնակցի առաջնորդին եպիսկոպոսացման, ուրեմն առաջնորդ-վանահայրը թէ՛ թեմէն և թէ վանքէն ընտրուած կրնայ համարուիլ, որով կը գոհացուի Սահմանադրութեան 48րդ յօդուածը, տրամադրող թէ վանահայրը վանքին Միաբանութենէն ընտրուի։

Վանքին մատակարարութեան համար փոխադարձ «Դրդուիլ դրութիւն մը կը սահմանէ Պատրիարքական Մրագիրը՝ տրամադրելով թէ վանական մատակարարութեան հաշիւը Միաբանութեան ընդհանուր ժողովէն քննուելէ և վաւերացուելէ յետոյ, երբ թեմական եպիսկոպոսն իւր հաւանութիւնն յայտնէ՝ ստորագրէ իւր պատասխանատուութեան ներքեւ, և երկու օրինակ պատրաստելով, մին ի Պատրիարքարան ղրկէ, միւսն ալ գաւառական երեսփոխանական ընդհանուր ժողովոյն։

Եթէ մինչեւ վեց ամիս դիտողութիւն չգայ գաւառական ժողովէն, Պատրիարքարանը կը վաւերացնէ վանքին հաշիւն, և կը վերադարձնէ առաջնորդ-վանահայրն։ Սա իրաւունք չունի բան մ'առնուլ վանական հաստատէն իւր անձին կամ թեմական պաշտօնին համար։ Վիճակէն գանձելի պտղի անուամբ տարեկան նուէրին հաւաքման և ուխտաւորաց յաճախմամբ վանքին պայծառացման մեծ ուշադրութիւն պարտի ընել առաջնորդ-վանահայրն՝ ի շինութիւն, ի հարստութիւն և ի բարեզարդութիւն վանքին։ Թեմական եպիսկոպոսին աշխատութեան փոխարէն, վանքերն ալ պէտք է ծառայեն նոյն թեմին կրթեալ և ուսեալ ժիր վարդապետներ, քահանայներ և վարժապետներ յարուցանելու, և պատսպարելու այնպիսի քահանայներ և սարկաւագներ որք ապաշխարութեան համար վանք ղրկուին։

Երբ վանք մը այս բարձր նպատակին ծառայելու չափ բաւականութիւն չունենայ, վանքին հասոյթք գանձուին եպիսկոպոսին կողմէ կարգեալ վանական վարդապետի մը և գաւառային Վարչութեան կողմէ կարգեալ հոգաբարձութեան մը ձեռամբ։ «Այս կարգի վանուց հասոյթք ո՛չ թէ քաղաքին վարժարանաց ծախքը գոցելու համար ծախսուելու են, այլ վիճակին Կրօնական ժողովոյն և Ուսումնական Խորհրդոյն տրամադրութեան ներքեւ պահուին, որպէս զի երբ նոյն վիճակին մէջ փոքրաթիւ բնակչաց անկարողութեան պատճառաւ դուրսէն քահանայ և վարժապետ վարձուի ասով վարձուի, որով ո՛չ մի գիւղ առանց քահանայի և վարժապետի մնայ»։

Ի բացատրութիւն այս տրամադրութեանց, Ս. Պատրիարք Հայրն հետեւեալ ուշագրաւ դիտողութիւնները կ'ընէ.

«Վանքին պահապան, վերակացու եւ մատակարար լինել վանականին իրաւունքն է։ Այս իրաւանց հակառակ՝ թեմերէն ոմանք աշխարհական տեսուչներ կարգած են վանքերուն. հետեւանքը այն եղած է՝ որ ժողովուրդը սկսած է ցրտանալ վանքին ողորմութիւն տալէ տեսնելով որ վանքին մէջ փոխանակ կրօնաւորի աշխարհական վերակացու կայ։ Դիտելի պէտք է՝ որ մեր ժողովուրդը վանքը կրօնաւորին եւ կրօնաւորը վանքին ապրանքն է դիտէ. վանքին բան մը նուէր տալուն մէջ կ'ենթադրէ թէ կրօնաւորին կուտայ. կրօնաւորին տալու ժամանակ նոյնպէս կենթադրէ թէ վանքին կուտայ.

«Թեմերուն մէջ այլ և այլ տեղեր վանքեր կամ կրօնական հաստատութիւններ կան, որոց հասոյթք մատակայ քաղաքացիք իրենց դպրոցաց ծախսուց կը գործածեն, և կոստանդնուպոլսոյ մէջ կազմեալ ընկերութիւնք, անգիտակ այն բնական պատրաստի յարմարութեանց, իրենց կողմանէ վարժապետ կը վարձեն կը ղրկեն. Տնտեսութեան ամենէն յայտնի պայմաններուն հակառակ է՝ կեցած բարիքը ան տեսել և ի հեռուստ բռնավար ջանքեր ը նել։»

Վերջապէս, յանդուգն նորութիւն մը կ'ընէ Ս. Պատրիարք Հայրը՝ ծրագրելով թէ ո՛ր թեմին մէջ մէկէ աւելի վանք կայ, բոլորն ալ միացեալ նկատուին, և կառավարուին մէկ ընդհանուր միաբանական ժողովով և նոյն տնօրէն խորհրդով, ընդ դերիչխանութեամբ մի թեմական եպիսկոպոսի։ Թեմին մէջ գտնուած չատ մը վանօրէից բոլոր կրօնաւոր վարդապետք մէկ վանքի կրօնաւորներ ճանչցուին։

Այս տրամադրութիւն ո՛րչափ ևս սկզբամբ գովելի, բայց գործադրութիւնը նոյնքան դժուար կը թուի մեզ։ Նախ որ այն մնօք փորձ մը չէ եղած ցարդ, և երկրորդ զի մեծ թեմեր կան ուր վանքերը քանի մը աւուր ճամբայ հեռի են իրարմէ։

Երբ մէկ վանքի միաբանաց մէջ իսկ համաձայնութիւն չի հաստատուիր շատ անդամ, երբ յաճախ ցաւ ի սիրտ կը լսենք պառակտումներ մի և նոյն Միաբանութեան մէջ, ո՞չ ապաքէն դիւցազնական ճիգեր պէտք են քանի մը վանքերու միջեւ ճշմարիտ միաբանութիւն և համաձայնութիւն հաստատելու համար։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆՑ ԺՈՂՈՎ

Յայտնի է թէ 1867էն ի վեր Աւստրիոյ և Հունգարիոյ միջեւ երկեակ դրութիւն մը հաստատուած է Հապսպուրկեան Տէրութեան կառավարութեան համար։ Աւստրիա ինքնօրէն է իւր ներքին վարչութեան համար. Հունգարիա եւս՝ իւր ներքին վարչութեան համար. բայց երկուքն ընկերութիւն մը կը գործեն հասարակային պէտքերու համար, որք են բանակ, նաւատորմ, երկաթուղի կամ մաքսային դրութիւն, և արտաքին յարաբերութիւնք կամ դիւանագիտութիւն։ Աւստրիա և Հունգարիա ուրոյն խորհրդարաններ ունենալէ զատ, հասարակային խորհրդարան մ'ալ ունին իրենց հասարակային գործոց տնօրինութեան համար։ Այս հասարակային խորհրդարան սապէս կը կազմուի.— Աւստրիոյ Երեսփ. ժողովին իւր մէջէն գաղտնի քուէով կ'ընտրէ 40 անդամներ։ Աւստրիոյ Տիրակալն եւս նոյն կերպիւ 20 անդամներ կ'ընտրէ իւր մէջէն, և Աւստրիոյ այս վաթսուն ներկայացուցիչք կը կազմեն աւստրեան Պատուիրակութեան ժողովը։ Նոյն կերպիւ Հունգարիա կը կազմէ իւր Պատուիրակութեան ժողովը, վաթսուն անդամէ բաղկացեալ։ Այս երկու Պատուիրակութիւնք տարի մը Վիեննայի, յաջորդ տարին Փէշթայի մէջ կը գումարուին, լսելու արտաքին գործոց, պատերազմական և ծովային գործոց և ելմտական գործոց հասարակային նախարարներուն բացատրութիւններն, և վաւերացնելով կամ մերժելով նոցա խնդրած վարկերը։ Տէրութեան հասարակային ծախսուց համար պէտք եղած դրամին 100ին 70ը կուտայ Աւստրիա և միայն 30ն՝ Հունգարիա, որ ուրիշ ամէն բանի մէջ կը խօսի եւ կը գործէ իբրեւ կէս Հապսպուրկեան Տէրութեան, եւ երբեմն՝ աւելին քան դայս։ Աւստրիացիք անիրաւ կը գտնեն այս բաշխում, բայց Մաճառք դիւրադրդիռ ժողովուրդ են, դրամի խնդրոց մէջ մանաւանդ, և գանոնք չդժգոհացնելու համար, Վիեննայի կառավարութիւնը ձայն չի հաներ՝ ծախսուց աւելի արդար բաժանում պահանջելով։

Հասարակային ծախքերն այս տարի հետեւեալ կերպիւ ցոյց տրուած են Պատուիրակութեանց մատուցեալ ելմուտացոյցին մէջ.

Արտաքին գործոց նախարարութեան 4.768.700 ֆիորին. Պատերազմական 112.323.878. Ելմտական 2.012.600. Հաշուակալութեան գերագոյն ատեանին 126

ԹԷՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ՕԳԴԱՎ ՖԷՕՅԷ

ԱՆԴԱՄ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻՈՅ

ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏԻ ՊԱՏԻՒ

—Ասուա՞ծ իմ, մրմնջեց խուլ ձայնով մը։

—Է՛հ, սիրելիս, ըսաւ տիկին տ'Էմառէ անոր ձեռքը բռնելով, միթէ ասիկա վանքէն լաւագոյն չէ՞։

—Ինչպէս կը տեսնես, շատ խռոված եմ ըսածէդ, պատասխանեց մանկամարդ ագլիկը... Բայց սիրալ չհակնաս սրտաոգիկը... Բայց սիրալ չհակնաս սրտաոգիկը... Զարմացումս յուզութեանս պատճառը է... Շատ կը ցաւիմ որ մերժուումով մը պիտի պատասխանեմ Գ. տը Բիէռբոնի վեհանձնութեան... ինձ ըրած պատուոյն... Բայց, ինչպէս ըսի, ես երկար ատենէ ի վեր վարժուած եմ ուրիշ մտածումներու, ուրիշ զգացումներու... և չեմ կրնար փոխել։

—Ինձի այնպէս կուգայ թէ վանք մտնելու դիտաւորութիւնդ դեռ անդառնալի կերպով որոշուած չէր։

—Անշուշտ... տակաւին պէտք ունիմ ես ինձ խորհուրդ հարցնելու։

—Ուրեմն, թող կուտա՞ս որ մարքիզին ըսեմ թէ պիտի մտածես, թէ թող չհրաժարի ամէն յոյսէ։

—Եթէ այդ տեսակ խօսք մը գուրցես, խաբած կ'ըլլաս զինքը։

—Ինչպէ՞ս, նոյն իսկ եթէ վանք չմտնես, դա՞ռնալ պիտի մերժես իր ձեռքը։

—Այո։

—Ա՜հ, գոչեց տիկին տ'Էմառէ, կարելի չէ՞ այդ... դուն մէկը կը սիրե՞ս։

Պէկադիս չպատասխանեց։

—Մէ՞կը կը սիրես, կրկնեց տիկին տ'Էմառէ, առանց կասկածելու թէ ի՞նչ շարշարանաց կը մատնէր իր բարեկամուհին։

—Թերևս, մ

բենց ոսկե ճամուկ համազգեստներով վագրի մորթեր նետած իրենց ուսերուն վրայ։ Ցաւարտ եկեղեցական պաշտամանց, թափորը կազմուեցաւ, և անցաւ գլխաւոր պողոտայներէն, ուր զօրքեր բարեւի կեցած էին։ Ամեն կարգէ կրօնաւորք եւ ամեն դասու ասպետք եւ պաշտօնատարք կը մասնակցէին թափորին, որ կանգ կ'առնուր քաղաքին այլ եւ այլ կողմերը բացօթեայ վայրեր կանգնուած խորաններու և սեղաններու առջեւ։ Ցաւարտ թափորին, կայսրը Փէշթա գնաց՝ Պատուիրակութեանց ժողովոյն բացումը կատարելու։

—Կը յիշուի թէ Մարեշալ Մոլթքէ 1834էն մինչեւ 1839 թուականը զինուորական ծառայութեան մէջ գտնուած է։ 1838ին ի Բրդատան կը պաշտօնավարէր, ընդ հրամատարութեամբ Հաֆիզ փաշայի, և յարձակմամբ առնելով ձէզիրէ կոչուած ամրացեալ աւանն, հոն գտաւ շատ խոր քարայր մը, որոյ ձեւէն կ'երեւէր թէ կըրօնային պաշտաման յատկացեալ վայր մ'էր։ Նեստորական քրիստոնէից մատուռ էր։ Մոլթքէի օսմ. զօրքերէն զինուոր մը որ ի մասին ներս մտած էր, ձեռք ձգեց ստուար ձեռագիր մը, զոր Մոլթքէ ապա ղրկեց Բրուսիոյ Արքայական Մատենադարանն։ Հոն գիտնականք վճռեցին թէ այս ձեռագիր ամենամեծ արժէք ունի։ Պ. Փեթերման Բրուսիոյ Արքայական Մատենադարանին «գոհարը» կ'անուանէր զայն։ որովհետեւ կը պարունակէ Նեստորականաց բովանդակ Նոր Կտակարանը, գրուած 1591ին, Նեստորականաց յատուկ գրերով։ Կտակարանին կցուած է ուրիշ ձեռագիր մը, որ սաղմերէն և աղաւնիներէն գրերով մեկնութիւններ կը պարունակէ Աւետարանին վրայ։ Մոլթքէ 1840ին Պերլին վերադառնալով, Պ. Փեթերմանի խնդրանքէ, այս ձեռագրին ուսումնասիրելու կերպին վրայ ծանօթագիր մը յօրինեց, որ կը պահուի նոյն Մատենադարանին մէջ։

—Պ. Ժոզէֆ Ռէյնաք, Ռէքէ-դէ-Ֆրանսէի երիտասարդ խմբագրապետն, օրինագիծ մը մատոյց երեսփոխանական ժողովոյն որով կը միտի դարմանել դատաւորական տիրանաց հետեւանքներն։ Ինչպէս ազգեալ օրագրեցինք, ժողովի Պոռաս անուն գործաւոր մը յանվիլիոն (Ֆրանսա), մահուան դատապարտուած է երեք տարի յառաջ բայց որովհետեւ փաստաբանք իր անմեղութեան զօրաւոր ապացոյցներ ունէին դատական նախարարութենէն բացարկ քննութիւն պահանջեցին, նախարարք ժամանակ չունեցան, գործն երկարեցաւ։ Ի խեղճ մարդն երեք տարի ոճրագործաց բանտին մէջ պահելէն եւքը՝ գտնուեցաւ բուն ոճրագործն որ ամէն բան խոստովանեցաւ, և ասոր վրայ Պոռաս արձակեցաւ։ բայց այն երեք տարուց մէջը ցին ինք և իր ո՛չ նուազ դժբախտ ընտանիք ի՞նչ տառապանքներ քաշեցին։ Վարչութիւնը ճամբու ծախք մը և փոքրիկ նպաստ մը վճարեց, բայց միթէ ասով Ֆրանսական ընկերութիւնը պատշաճ փոխարինութիւն բրա՞ւ Ֆրանսական դատաւորութեան այս անմեղ զոհին։—Կառավարութեան չբրածը ժողովրդեան պարաքն է ըսելով, Ֆէյ-ը 1.000 ֆր. ի նուէր մը զրկեց խեղճ մարդուն, և հանրային գթութեան հրաւէր կարդաց։ Պռասի դատապարտումէն ի վեր, իր կին ամեն ջանք ի գործ դրած էր ամուսնոյն անմեղութիւնն երեւան հանել տալու համար, և տասն անգամ Սպանիա ուղեւորած էր այս նպատակաւ։ Երբ այր և կին զիրար տեսան, տղու պէս լացին, և ընդ երկար չկրցան բառ մը արտասանել։

—Անցեալ չորեքշաբթի օրն ի բուն ձիւն տեղաց ի Հուենգարիա, և մաճառ գիտնականք կ'ըսեն թէ ցուրտը մի քանի օրեր զգալի պիտի լինի Եւրոպոյ ուրիշ կողմերն ալ։

—Ի Հավանա, Ֆրանսացի վաճառական Պ. Փիշէօ, որ, իր կնոջ հետ, ճանչցաւ մարդասպան Էյռոն եւ Ֆրանսական իշխանութեանց յանձնել տուաւ, գովելի զգացմամբ մերժեց մեծագումար պարգեւը զոր Ֆրանսայի կառավարութիւնն յատկացուցած էր այս մեծ ոճրագործը բռնողին կամ բռնել տուողին։—«Գէշ կիները պատճառ եղան իմ անդարմանելի կորստեանս, կը յեղյեղէ չարաբնակ Էյռօ, ինչպէս նոյնը կը յեղյեղին ուրիշ երկու մեծ ոճրագործք, Փրատօ և Փրանցիի։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կրօնական ժողովն երէկ ինիստ գումարեցաւ ի խորհրդարանի Ղալաթիոյ ընդ նախագահութեամբ Ամենս. Ս. Պատրիարք Հօր և զրաղեցաւ այլ և այլ անհատական խնդիրներով։

Ժողովը ի միջի այլոց ընդունեց Արժ. Սահակ վարդապետ Նազարէթեանի հրաժարականն ի քաղաքացութենէ Թում գաբուի գուրսի Ս. Յարութիւն եկեղեցւոյ և որոշեց որ ըստ առաջնոյն Բուսմէլի Հիսարի եկեղեցւոյն քաղաքացութեան պաշտօնը վարէ նա։

Ժողովը Կրօնական Դիւանին քարտուղար անուանեց Արժ. Խորէն Աւագ քահանայ Փէշլիվանեանը։ Ինչպէս յայտնի է, այդ պաշտօնը բաց մնացած էր Անոյշեան Արժ. Գաբրիէլ վարդապետին Յերուսաղէմ մեկնելուն պատճառաւ։

Մայիսի 13ին Թիֆլիսի ամառնային կլուբում տեղի ունեցաւ ճաշկերոյթ ի պատիւ հայր Ղեւոնդ Ալիշանի յիսնամեայ գրական գործունէութեան։ Ճաշին ներկայ էին 100 հոգի թէ լուսաւորական և թէ կաթոլիկ հայերից։ Ճաշը շատ կենդանի անցաւ։ խօսվեցան ճառեր և խմվեցան բազմաթիւ կենացներ։ Հաստատուեցաւ թերթ մը որ կոչուի «Արարատ» իբր հորին համակրութիւնը դէպի հայրենիք պատրաստելի գործիք։ Նոյնպէս, երեկոյեան, Թիֆլիսի թատրոնում ներկայացում կար ի պատիւ Ալիշանի։ Խաչատրեան երկու գործողութիւն Շէկսպիրի «Հեմլէտ»ի պիէսայից, նմանապէս մի գործողութիւն «Վարդան Մամիկոնեան» ողբերգութիւնից և ապա սրվեց ներկայացման պրոլոգն մասը, որը բաղկացած էր հնգտեւեալ 6 կտորներից։ 1 կն. սագրական ակնարկ Ալիշանի, կարդաց Բարամեան, 2 մի բանաստեղծութիւն շատ հնարհալի կերպով կարդաց տիկին Արասխանեան, 3. «Բլբուլն Աւարայրի» հեղ. Ալիշանի, կարդաց Ց. Լալայեան, 4. կենդանի պատկեր «Բլբուլն Աւարայրի» գրից Բաշինջաղեան, 5. Ալիշանի մի խօրական երգ, երգեց խումբը, և 6. մի ֆրանսերէն Բոմանս և «Ահ ի՞նչ անուշ» երգեց օր. Ասլամազեան։ Ալիշանի կիսարձանը գրված էր բեմի վրա շրջապատված ծաղիկներով և կանաչով։ Հասարակութիւնը, որը բաղկացած էր թէ լուսաւորական և թէ կաթոլիկ հայերից, ոգեւորված ծափահարութիւններով էր վարձատրում սիրողներին։ (Մշակ)

ԲԱՐԵՑԻՇԱՏԱԳ ՍԱՆԱՍԱՐԵԱՆՑ

Ըստ որոշման Կրօնական ժողովոյ, յառաջիկայ կիրակի մայրաքաղաքիս բոլոր եկեղեցեաց մէջ պաշտօն պիտի կատարուի ի հանգիստ հոգւոյ բարեյիշատակ Աղա Մկրտիչ Սանասարեանի։ Կրօնական ժողովոյ սոյն որոշումը պատրիարքական շրջաբերականաւ հաղորդուեցաւ քարոզչաց։

* *

Աւարիկ Պ. Կարապետ Եղեանցի կողմէ Ամեն. Տ. Խորէն Ա. Պատրիարք Հօր ուղղեալ հեռագիրն, որ կը գուժէր ազգային մեծանուն բարերարին մահը։

ԲԵՐԼԻՆԻՑԻ, 28 մայիս

Սանասարեան ի Բրլին վախճանած է։ Թաղումը տեղի Զ. այս անգամ մանելի կ'լուսաւոր, ազատեմ յիշել զանազանցնելն յաղթ. Զ. ր.

Կ. ԵՂԵՂԵՑ

Ս. Պատրիարք Հայոց ի պատասխանի հետեւեալ հեռագրին ուղղած է

Ն. Վ. Եմինութիւն Եղեանց

Պաշտօնական Հայրական Կրթութեան

Բեգրասարակ

Կ. ՊՈԼԻՍ, 29 մայիս

Խորապէս զգաստալ եմք ընդ ցաւալի կորուստն հանրային յանձին Սանասարեանց։ Խմացուցէք թէ ո՛ւր և ե՛րբ թաղումն տեղի պիտի ունենայ, որպէս զի նորա արժանի յիշատակին համար աղօթեմք։

Հրամայած եմք որ ի մեր եկեղեցիս մեծ Բարերարին հոգւոյն հանգստեան համար աղօթքներ կատարուին։ ԽՈՐԷՆ ՊԱՏՐԻԱՐՔ

Թաղական Խորհուրդս գոհութեամբ սրտի կը ծանուցանէ թէ առաջնորդ Յովսէփ Նալբան էֆէնտի, որ ընդհանրապէս կը գտնուի իր մասնաւոր յարկին Պոլիս, Պահճէ Դափռ Համիտիէ փողոց թիւ 8, յօժարակամ յանձն առած է ժամանակս դարմանել իրեն դիմողներն ամէն ուրբաթ օր ժամ 3էն մինչ 6 ի դեղարան Պ. Մոյիսէի, Թաքսիս Ս. Գէորգ եկեղեցւոյ կից։

Ի դիմաց Թաղ. Խորհրդոյ

Ատենադպիր Ատենապետ

Մ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ Մ. Զ. ՄԻՐՈՅԵԱՆ

Սամաթիա, 27 մայիս, 1890

ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐԵԱՆ

—

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

ՖՐԱՆՍԵՐԷՆ ՀԱՅ ԱՇԽԱՐՀԻԿ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ի. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ

Հրատարակուեցաւ 35րդ թերթն որ կը հասնի մինչեւ Inviter բառը։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՏՈՒԱՆՇԵՆԻՐ

Զօրավարդ կարգի Մէճիտիէ պատուանշան տրուեցաւ Ֆրանսայի ուսուցիչ Պ. Պատուի։

Զօրավարդ կարգի Մէճիտիէ՝ ի Փարիզ հրատարակեալ Լը-Նէդէ լրագրոյն խմբագիր Սանուա էպուլէդարէի։

ԹՈՒՐԲԻՆ ԵՒ ՊՈՒԼԿԱՐԻՆ

Բ. Դուռը, կրսէ Մէնիէռ-, նկատելով որ պուլկար կառավարութիւնը ժամանակէ մը ի վեր կառավարութեանց հետ առեւտրական պայմանագրեր կը կնքէ, հակառակ Պերլինի Դաշնագրոյն, և նկատելով որ Եանպօլու-Պուրկազի երկաթուղւոյ գծին շինութեան եղանակն եւս հակառակ է նոյն Դաշնագրոյ տրամադրութեանց, որոշած է հրաւիրել զՊուլկարիա որ յարգէ Պերլինի Դաշնագրոյն տրամադրութիւնները։

Բ. Դուռն այս առթիւ տէրութեանց կարծիքը հարցուցած ըլլալով, Աւստրիայէ զատ միւս բոլոր տէրութիւնք հաւանած են կայս. կառավարութեան այս որոշման։

Ի ԿՈՑՍ. ՊԱԼՈՍ

Բարձր. Մեծ-Եպարքոսն երէկ առաւօտ կայս. պալատ գնաց և Վեհ. Սուլթանի ինչ ինչ հրամաններն ստանալով, Բ. Դուռը դարձաւ։

—

ՎՍԵՄ. ՑԱՌԻ Բ ՓԱՌԱ

Երմտական նախարար Վսեմ. Յակոբ փաշա տակաւին բոլորովին ապաքինած չըլլալով, երէկ իր պաշտօնատեղին չկրցաւ երթալ։ Ն. Վսեմութիւն այսօր եւս չպիտի կրնայ իր բնակարանէն դուրս ելլել։

—

Ի Բ. ԴՈՒՌՆ

Ներքին գործոց նախարար Վսեմ. Միւնիր փաշա երէկ Մեծ-Եպարքոսին քով գնաց և ինչ ինչ կարեւոր խնդրոց վրայ պահ մը տեսակցեցաւ Ն. Բարձրութեան հետ։

Առեւտրական և Հանրօգուտ շինութեանց նախարար Վսեմ. Բաֆֆ փաշա եւս երէկ տեսակցութիւն մը ունեցաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին հետ։

—Աւստրիական դեսպան Պառոն տը Բալիչէ երէկ Բ. Դուռն երթալով, յաջորդաբար տեսակցեցաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին ու Արտաքին գործոց Վսեմ. նախարարին հետ։

—

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Մուսուլի նահանգին առողջապահական բժիշկներէ մին, որ պաշտօն ունէր ձէզիրէի վարակեալ վայրերն երթալով քննել թէ այն կողմեր ծագած հիւանդութիւնը քոլերա՞ է թէ ոչ, հեռագրած է մայրաքաղաքիս առողջապահական վարչութեան թէ ծագած հիւանդութիւնը պարզապէս հ.մմ- է։

Միւս կողմէ, առողջապահական վարչութեան հասած հեռագրական լուրեր կը ծանուցանեն թէ քոլերան դադրած է ի Պէլլէտ, Պաղտատի մոտ։

—

ԴԱՂԱՐՈՒՄՆ «Թ. ՀՌԳԻԴՊԹ»Ի

(Պ-ղ-ռ-ն-ր Տ-ր- Տ-ս-ռ-ռ-)

Թէրմինը Հ-ր-ր-ն ղրաղ իրը սովորութիւն դրած ըլլալով շարունակել եղած պատուէրներու հակառակող իր ընթացքը, նախարարական հրամանաւ այսօրուընէ սկսեալ անպայման կերպիւ դադարման դատապարտուած է։

2 մայիս 1890

—

ՀՈՆԼՈԳՈՒՏ ՇԻՆՈՒԹԻՒՆԻՆ

Պ. Էմիլ Մէօնիէ ծրագիր մը մատուցած է կայս. կառավարութեան, Հայտար-Փաշայի առջեւ նաւահանգստի մը շինութեան արտօնութիւն խնդրելով։ Հանրօգուտ շինութեանց նախարարութիւնն ի մտոյ պիտի ձեռնարկէ այդ ծրագրի քննութեան։

—Պելճիոյ Բօքքրիլ ընկերութեան ընդհ. տնօրէն Պ. Կրէնէռ ծրագիր մը մատուցած է Մեծ-Եպարքոսին՝ երկաթուղւոյ մը շինութեան մենաշնորհ խնդրելով։ Այդ երկաթուղին պիտի սկսի Սինոպի նաւահանգիստէն և պիտի հասնի մինչև ի Պոյապատ, Ամասիա և Թոքատ, ճիւղ մը ունենալով նաեւ Ամասիայէն Եոզկատ։ Պոյապատէն մինչեւ Բասֆամունի ուրիշ գծի մը շինութեան առաջարկն ալ կը պարունակէ միեւնոյն ծրագիր։

—Այսրնի երկաթուղեաց ընկերութեան երեք երկրաչափ, որք պաշտօն ունէին Տիներէն մինչեւ Դոնիա շինուելիք երկաթուղւոյ գծի անցնելու տեղերը քննել, մայիս 8ին Դոնիա ժամաներ և կուսակալին հետ տեսակցելէ յետոյ Զմիւռնիա վերադարձեր են։

Այս երկրաչափներու տուած տեղեկութեանց համաձայն, Տիների ու Դոնիայի միջև եղած հեռաւորութիւնն երեք հարիւր քիլոմեթր է։ Երկրաչափք յայտարարած են որ թէեւ մէկ քանի տեղեր լեռնոտ ըլլալով, դժուարութիւնք պիտի ծագին, սակայն կարելի է առանց ներքնուղիներ բանալու գիծը շինել այդ լեռնոտ տեղերու քովերէն դառնալով։ Այսրնի ընկերութիւնն եթէ այս տարի մենաշնորհ ստանայ, օգոստոսի սկիզբները շինութեան պիտի ձեռնարկէ և մինչեւ մէկ ու կէս տարի պիտի կրնայ այդ գիծը Զայ անուն տեղն երկարել։ Շինութեան ամենէն դժուար մասը մինչեւ այդ տեղն ըլլալով, կը յուսացուի որ Դոնիայի գիծն երեք կամ երեք ու կէս տարիէն աւարտի։

—

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Բարիզի մէջ գումարեալ հեռագրական համաժողովոյն եգիպտական անդամ Արթին փաշա նագուպ յայտարարած էր թէ Եգիպտոս եւս կ'առնու հեռագրական միջազգային միութեան սահմանագրելու առաջարկը։ Եգիպտական լրագիրք կը ծանուցանեն թէ այս որոշման շարժառիթ եղած է Եգիպտոսի հեռագրական վարչութեան և ընդհանրական հեռագրական ընկերութեան (Իմբէռ Բիւկէր-ֆ Դոմէնէ) միջև վերջերս գոյացեալ համաձայնութիւնն մը որուն համեմատ այս վերջինը յանձն կ'առնու տարին 6700 ոսկի վճարել Եգիպտոս։ Հեռագրական վարչութեան՝ որպէսզի այդ վարչութիւն չ'մանակցի հեռագրական միջազգային միութեան, որով ընկերութիւնը կարող կ'ըլլայ իւր արդի սակագինը պահել։

—

ՇՈՊԵՆԱՒԱՅԻՆ ՆՈՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Մայրաքաղաքիս վաճառականք ոմանք որոշած են ընկերութիւն մը կազմելով, Անգլիայէն ազատարար շոգենաւ մը բերել տալ և արդէն գործարանի մը հետ բանակցութեան մտած են շինուելիք շոգենաւուն յատակաձեւի պատրաստութեան համար։ Որոշուած է որ այդ շոգենաւ աւելի մեծ ըլլայ շուէյտական Պէլ-շոգենաւէն որ, ինչպէս յայտնի է, Պոլսոյ նաւահանգստին մէջ կը գտնուի և ընկղմած ու խրած շոգենաւուց օգնութեան կը փութայ։ Նոր բերուելիք շոգենաւն ի պահանջել հարկին ապրանք ալ պիտի փոխադրէ։

—

ՊՈԼՍՈՅ ՆԱՒԱՀԱՆԳԻՍՏԸ

Լ. Հէրէռ խօսելով Հէյպէլի կղզւոյն առջեւ նաւարանի մը շինութեան ծրագրին վրայ, այս առթիւ կ'ըսէ թէ ամեն տարի Պոլսոյ նաւահանգիստն ու Վոսփոր երթեւեկող շոգենաւուց տարողութիւնն է տասը միլիոն տակառաչափ։ Միջազգային վաճառականութեան այս շարժումը տարուէ տարի կ'աւելնայ։ Մաքսատան և փարոներու վարչութեան պաշտօնական վիճակագիրը ցոյց կուտայ թէ, վերջին տասներկու տարիներու միջոցին, նաւային շարժման տարողութիւնը կրկնապատկուած է։

—

ԵՂԵՌՆԱԳԱՏ ԱՏԵԱՆ

Եղեռնագատ ատեանն երէկ գրաղեցաւ Քիւշիւք Զէքմէճէի Պէյիւք Հայքալը գիւղացի երկրագործ Թոսուն կամ Սալէհ Բէկլիվանի սպանութեան դատովը։ Ամբաստանեալք էին սպանելոյն կինը Խատիչէ և սպասաւորն՝ Իպրահիմ Բէկլիվան անուն գաղթական մը։

Դատաւորք և ունկնդիրք սոսկմամբ լսեցին այդ ոճրագործութեան մանրամասնութիւններն որ ասսկի։

Իպրահիմ ութ ամսոյ չափ Թոսունի ծառայութեան մէջ գտնուելով, սիրային յարաբերութիւններ կ'ունենայ անոր կնոջ Խատիչէի հետ և իր այդ ապօրէն յարաբերութիւնները ժամանակ մը կը շարունակէ առանց Թոսունի կասկածն հրաւիրելու։ Երկու սիրահարք իրենց յարաբերութիւնն աւելի ևս ամրապնդելու համար կ'որոշեն Թոսունն սպանել։ Դիշեր մը Խատիչէ Իպրահիմը տունէն ներս կ'առնու և երկուքն ի միասին Թոսունի պառկած սենեակը կ'երթան։ Անդ Իպրահիմ՝ Թոսունի բերանը լաթով մը խցելով կոկորդը կը սեղմէ, մինչդեռ միւս կողմէն Խատիչէ իր ամուսնոյն ամորձիքներն այնչափ սաստկութեամբ կը սեղմէ որ կ'սկսի արիւն ցայտել։ Խատիչէ անմիջապէս պատռած մաշկը կը կարէ և ամուսնոյն գլուխը կը վիրաւորէ, ցոյց տալու համար թէ գիշեր ատեն սանդուղքէն ինկած և այնպէս մեռած էր նա։ Իպրահիմ ու Խատիչէ այս ոճիրը կատարելէ յետոյ ամենայն հանդարտութեամբ ուրիշ սենեակ մը կ'երթան և հաճոյալից ժամեր կ'անցընեն։

Ամբաստանիչ ատեանն իւր տեղեկագրով պահանջած էր որ այդ երկու ոճրագործք մահուան դատապարտուին, ըստ տրամադրութեան 170րդ յօդուածի Պատժական Օրինաց։

Դատարանն այդ առթիւ եղած գրութիւններն ու վկայից յայտարարութիւնները լսելէ յետոյ իւր որոշումն ուրիշ օրուան յետաձգեց, որպէս զի Թոսունի երկու որդւոց, մին 9 և միւսը 7 տարեկան, փոխանորդն Մուսթաֆա Սիւլէյման՝ հօրեղբայր սպանելոյն, հարկ եղած Շէրիի պաշտօնագիրն ստանայ իբրեւ անձնական դատախազ ներկայանալու համար։

—

ՈՃԻՐՔ ԵՒ ԱՐԿԱԾՔ

Երէկ ի Պոլիս Քիւրքճի խանի մէջ կռիւ մը տեղի ունեցաւ հայու մը ու առնավուտի մը միջեւ։ Առնավուտն այդ խանին մէջ հաց է պանիր կը ծախէր և Հայն, որ Բարթող անուն գաւառացի մ'էր, հայրենիքէն նոր եկած ըլլալով ոչ է զբաղում չուներ։ Բարթող կռուի միջոցին դանակ մը առնելով մեռց առնավուտի ձախ կողն և փախաւ։ Ոստիկանք վրայ հասնելով, հիւանդանոց փոխադրեցին վիրաւորեալը։

—Նախընթաց գիշեր, ժամ կին միջոցները Մաքրիգիւղցի երկու հայ երիտասարդ կրհանքներէ կ'երթային ուր հրաւագրի պաշտօն կը վարեն, երբ Խալֆայի Պաղ կոչուած տեղն անցնելու ատեն, չորս հոգի այդ այդիէն և չորս հոգի ալ Լեռան ստորոտէն դուրս ելելով, կը պաշարեն զանոնք և դաշոյն ի ձեռին գրպանին գտնուած դրամը կը պահանջեն։ Երիտասարդներէ մին 8 ոսկի և միւսը 25 մէճիտ ունէին։ զորս կը յանձնեն Զարգործաց հեռանալէն յետոյ երիտասարդք Մաքրիգիւղ դառնալով եղելութիւնը կ'իմացունեն տեղւոյն իշխանութեանց որք գիշերայն ոստիկան-զինուորներ կը հանեն ամեն կողմ և կը յաջողին ձերբակալել չարագործաց մին՝ որ այգեպան մըն էր։

—Այս առաւօտ Առնավուտգիւղի մէջ չորս տարեկան յոյն աղայ մը տան պատուհանէն վար խնդալով անմիջապէս մեռաւ։

—

ՌԻՏԱՔ ՊԷՅԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Սպանեալ Ռիֆաթ պէյի հայրն՝ Ահմէտ պէյ, որ իւր որդւոյն եղերական վախճանէն զգածեալ հիւանդացած էր, ապաքինած ըլլալով երէկ Ոստիկանութեան Դուռը գնաց։ Անդ ի ներկայութեան Ահմէտ պէյի, ոճրագործներէ մին, Միւլէյման, կրկին անգամ հարցաքննուեցաւ։

ԱՄԱՌՆԱՑԻՆ ԹԱՏՐՈՆԻՆ ՀՐԿԻԶՈՒՄԸ

Բերայի ոստիկանութեան կողմէ բացուած նախնական քննութեամբ հաստատուած է թէ, Թէփէ-Պաշիի ամառնային թատրոնին մէջ ո՛չ ոք կը գտնուէր Հրդեհի ծագած պահուն։ Մեքենավարը՝ Պ. Ֆրանսուա, յայտարարած է թէ ինք եւ իւր գործաւորք իրենց աշխատութիւնն աւարտելով, հեռացած էին արկածէն բաւական ժամանակ առաջ, եւ յարած է թէ ո՛չ մէկ լամբար վառուած կար։ Հետեւաբար արկածին պատճառն անյայտ կը մնայ առ այժմ։ Պ. Քիւտիւսի խումբին գլխաւոր դերասանք եւ դերասանուհիք՝ Պ. և տիկին Մանտրէ-Բագար, Օր. Պրիուզ, Պ. եւ տիկին Կրիվէլ, Պ. եւ տիկին Քրէթի, Օր. Էլիզ. Օր. Ժէզլէն, Պ. Պ. Պոնէլի, Տուչէ, Ժիլ եւ Պոնէ՝ որ և է մեռաս կրած չեն երկուշաբթի գիշերուան հրդեհէն։ Գլխաւորաբար վնասուողներն են խմբերգուք եւ երկրորդական երգիչք ու երգչուհիք։ իսկ առաջնակարգներէն տիկին Կռանիէի բոլոր արդուզարդերն այրած են։ Տիկին Կռանիէ Թիֆլիզէն ճանբայ ելած էր Ֆրանսա երթալու համար եւ իւր հանդերձից մնացուկները Պ. Քիւտիւսի յանձնած էր։ Կ'երեւի թէ ամենէն աւելի վնասուողներէն է Պ. Քիւտիւս որուն ո՛չ միայն բոլոր թատերախաղերն ու ձայնագրական տետրերն այրած են, այլ եւ թատերական հանդերձեղէնները։

Բերայի կառավարիչ Նազիմ պէյ հրամայած է մանրամասն եւ խիստ քննութիւն մը բանալ հրդեհի ծագման պատճառն ստուգելու համար։ Պարտիզին սպասաւորներէ չորսը ձերբակալուած և յետոյ երաշխաւորութեամբ ազատ թողուած են։

* *

Ֆրանսական խումբը, երկուշաբթի գիշերուան աղետէն թէպէտ մեծապէս վընասուած ու ցնցուած, գերագոյն ճիգ մը բրած է իւր ներկայացումներն սկսելու համար։ Ուստի և երէկ գիշեր, Թէրէ-Պաշիի ձմեռնային թատրոնին մէջ ներկայացուց Ռ-ղ-ռ-ր-Ռ-ն է Զ-ն-ռ-ռ օրէկ-թը, և այս գիշեր պիտի ներկայացուցէ Լա Բէռիւրիոլ (La perichole), մասնակցութեամբ տիկին Մանտրէ—Բաքարի և խմբին միւս գլխաւոր երգչուհեաց ու դերասանաց։

Թէվֆիք փաշայէ, Պ. Կալլանէ և Մելիթիատ ժագսօս էֆէնտիէ բաղկացեալ յանձնաժողովը որ Իպսիր գնացած էր Այտընի երկաթուղեայ ընկերութեան եւ կայս. անձնական Դանձուն Նախարարութեան միջեւ ծագած հոգային խնդրոյ մը քննութեան համար, իր պաշտօնն աւարտած ըլլալով մայրաքաղաքս վերադարձած է։ Իւր տեղեկագրին մէջ զոր երէկ մատոյց Հանրօգուտ շինութեանց նախարարութեան, Ցանձնաժողովը կը յայտնէ թէ Այտընի երկաթուղեայց ընկերութիւնը վաճառական թուղթերով չէ կրցած հատուցել խնդրոյ առարկայ եղող հողին իր սեպականութիւնն ըլլալը։

—Երէկ ամերիկեան աղջկանց Հոմ վարժարանի ծխնելոյզը բռնկեցաւ ի Սկիւտար։ Զորս կողմէ օգնութեան փութալով յաջողեցան վտանգին առաջն առնուլ։

—Նէ-էրը Խ-ռ- շոգենաւն (երբեմն Մ-ռ-) երէկ ճիտէ ուղեւորեցաւ չորս հարիւրէ աւելի իսլամ ուխտաւորներով։

—Նախընթաց օր Նիկոմիդիոյ ծովախորշին մէջ սաստիկ փոթորիկ մը ծագելով, երկու ցռկանաւեր ցամաքը նետուեր և մէկ քանի նաւակներ ևս անյայտ եղեր են։

—Բէրէ Բ-ռ-էղէն լրագրոյն ի Թուրքիա մուտքն արգիլուեցաւ։

—Պոլսոյ Սարբկիզէզ և Զինեմիրի Քաւյու թաղերու հրկիզելոց համար մինչեւ հիմայ 132.125 ղրուշի նպաստ մը բաշխուած է։

—Բերայի թաղապետութեան կողմէ այս աւուր Թուրք լրագրաց մէջ հրատարակեալ ազդարարութիւն մը կը ծանուցանէ թէ Բերայի ու Ղալաթիոյ մեծ փողոցներուն վրայ գտնուած տուներ ու խանութներ աղբիւսները կէս գիշերէն յետոյ փողոց նետեն, որովհետեւ թաղապետութեան կառքերը կէս գիշերէն յետոյ կուգան փողոցները մաքրելու համար։ Հակառակը գործողք օրինաց տրամադրութեան պիտի ենթարկուին։

—Քրէսի Լիսնէ դրամատան տնօրէն Պ. Լէօն Լըմուան արձակուրդով Բարիզ ուղեւորեցաւ։

—Այն յոյն բարերարը, որուն համար ծանուցինք երէկ թէ 10 000 ոսկի նուիրած է Բերայի մէջ թաղային վարժարանի մը շինութեան համար, Խրիսթաքի էֆէնտի Զոգրաֆոսն է։

—Հալէպի առաջին երկրաչափը Իսքէնտէրուն երթալով քննած է տեղւոյն ճահիճներն, որոց մաքրելուն համար որոշում մը տրուած էր։ Երկրաչափն իւր քննութիւնն աւարտելով Հալէպ վերադարձած է։ Կ'ըսուի թէ այդ ճահիճը մաքրելու համար տասն հազար ոսկւոյ չափ ծախք մը պիտի ըլլայ։

—Ֆրէ լրագրոյն մէջ կը կարդանք թէ Մէսթօ անուն աւազակ, որ տասն և հինգ տարիէ ի վեր կ'սպանտակէր ու սպանութիւններ կը գործէր Քրլիսի ու Այնթապի շրջակայքը, ձերբակալուեր է։

—Պարսկական կառավարութիւնն Ա-ռ-ռ- և Ա-ռ-ռ- պատուանշանի շորրորդ աստիճանը նուիրած է Ահմէտ Ֆարիզ պէյի, դեր-անօրէն առաջին ընդհանուր դատախազութեան դիւանին։

—Տարրիւ չէֆգա վարժարանի նախկին շրջանաւարտ Մէհմէտ Ալի պէյ, որ հեռագրական արհեստն ուսանելու համար Փարիզ ղրկուած և յետոյ մայրաքաղաքս վերադառնալով թղթատարական քննիչ անուանած էր, առաջարկած է որ օսմանեան թղթատարատանց մէջ դուռնուին ծալլուած թուղթ բռնելի դրութիւնն, ինչպէս կան եւրոպական թղթատարատանց մէջ։ Հեռագրական և թղթատարական վարչութիւնն՝ այս առաջարկն ընդունելի գտնելով խնդիրը մատուցած է Բ. Դրան։ Մէհմէտ Ալի պէյ նոյնպէս առաջարկած է որ նամակատանց մէջ յատուկ գրիչ և կաղամար գտնուի, որպէս զի նամակատուն դիմողները կարենան այդ ծալլուած թուղթ բռնելուն մէջ գրել և գոցելով, նամակատան յանձնել։

—Ստիվիչ ընկերութեան Շաբէէյ շոգենաւն անցեալ չորեքշաբթի օր Աղեքսանդրիայէն ի Կ. Պոլիս ճամբայ ելած պահուն, երբ նաւահանգստէն ելնելով բաց ծովուն մէջ կը յառաջանայ, սաստիկ փոթորիկի մը կը բռնուի։ Նաւապետը տեսնելով որ շոգենաւը վտանգի մէջ է, բերը թեթեւցնելու համար կ'ստիպուի այլ և այլ ապրանքներ ծովը նետել։ Բիչ յետոյ փոթորիկը կ'անցնի և շոգենաւն առանց վընասուելու իւր ճամբան կը շարունակէ։

ԶՐԻ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Երբ կրնաք վիճակահանութեան բաղդին դիմել և ուզած ատեն արժէքուղթեղիզ վաճառել, հետեւաբար տուած ստակնիզ առնուլ, շահելու պատահականութիւններ ունիք որք ծախս մը չեն պատճառեր ձեզ եւ այսպէս կրնաք ձրիաբար փորձել բաղդը։

Այս նշանաւոր առաւելութիւնը զոր ունիք Պէվիկաքուա Լա Մազայի պարտատոմսերը, շատ գնահատուած է մեր հրապարակին վրայ, ուր իր դրամը վիճակահանութեան տոմսեր գնելով վատնելու դժբաղդ սովորութիւնը կայ։ Այս է պատճառն այն յաջողութեան զոր անցեալ մարտ 19|31ի վիճակահանութիւնն ունեցաւ աստ։ Ամէն գնորդները բաղդաթիւ են յ'Իսքընդրն էֆէնտի, Տէյիրմէն խան, 14, յունիս 18|30ի յառաջիկայ վիճակահանութեան համար։

ԱԶԴ ՕՍՄ. ՀԱՆՐ. ՊԱՐՏՈՒՈՑ

Օսմ. Հանր. Պարտուց Թաղեալ հասութից վարչութիւնը կը ծանուցանէ Թղթի Համիտիէ գործարանին բաժնետերաց թէ՝ դրոշմի տուրքը վճարուած ըլլալով երեք հարիւր հազար ոսկւոյ դրամագլխին վրայ՝ որ տասնական ոսկինոց երեսուն հազար բաժնեթուղթերով ներկայացեալ է, իրենց կը մնայ միայն իրենց բաժնեթուղթերը տանիլ Դրոշմի մասնաւոր պաշտօնատունը, Ղալաթիոյ Մաքսատան վերև, ուր դրոշմման ձեւակերպութիւնք պիտի կատարուին առանց ծախքի յիշեալ բաժնեթղթոց վրայ։

ԸՆԴՀ. ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս, 28|9 յունիս 1890

1—3

ԱՌ ՊԱՏ. ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

ԵՒ ԱՌ ՏԵՍՈՒՉՍ ՀԱՆ Վ.ԱՐԺԱՐ ԼՆԱՑ

Մի՛ ընկեր որ պարզեւաբաշխութեան յարմար գեղեցկագոյժ ոսկի գրքեր կը պակսին, ի մեզ։

ԴԻՒՆՈՅՆ՝Ի Մարգարեան գրատան և կը դնէնի 2էն 10 և 10էն 30 դանկան արժող

տուած է միշտ Աւստրիոյ պետութեան իրեն նկատմամբ բռնած բարեացակամ գիրքէն, ուստի յանցանքն Աւստրիոյ պետութեան չպիտի ըլլայ եթէ այդ գիրքը փոխուի. սակայն, ի նկատ առնելով Սերպիոյ խնամակալութեան և կառավարութեան տուած բարեկամական յարաբերութիւնները, յուսանք թէ պէտք եղածին չափ հեղինակութիւն պիտի ունենան այդ հաւատիքներն ի գործ դնելու համար։ Աւստրիոյ պետութիւնը միշտ հասկցուցած է Սերպիոյ որ փափաքելի է զի բարւոք յարաբերութիւնք տիրեն Սերպիոյ և Ռուսիոյ մէջտեղ, եւ թէ այդ բարւոք յարաբերութիւնք չեն պարտաւորեցներ թշնամական յարաբերութիւններ ունենալու Աւստրիոյ-Հունգարիոյ հետ։

ԱՐԵՒԵԼ. ՀԵՌԱԳՐ. ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԷՆ

ԲԱՐԻԶ, 10 Յունիս.—Ֆրանսայի արտաքին և մասնաւորապէս գաղթային աշխարհավարութեան վրայ արտաքին գործոց նախարար Պ. Ռիպոյի ըրած յայտարարութիւնք լաւ տպաւորութիւն թողուցին թէ՛ ի Ֆրանսա և թէ դեսպանական շրջանակաց մէջ։

ՊՐՈՒՍԷԼ, 10.—Ի Պելճիա տեղի ունեցած ընտրութեանց վրայ առնուած առաջին լուրերէն կը տեսնուի որ նախորդ երեսփոխանաց ժողովոյն ամէն կուսակցութիւնք պիտի պահեն իրենց դիրքը նոր ժողովոյն մէջ։

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 30 Մայիս

Օսմանեան Քոնսոլիտէ

Երէկ երեկոյ դոց. (Միջոց. Բ. Սերի	21	16
Գօրաւոր դոցուէլէն վերջը »	21	15 1/2
Բերայի մէջ »	—	—
Առաւօտեան բացուելու »	21	14 1/2
Կէս օրին »	21	15 1/2

ԻՍԹԻԳՐԱԶԸ ՑԱԹԻԼԻ

Երէկ երեկոյ	61	18
Այս առաւօտ	61	16
Կէս օր	61	16

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԷԹԼԹՈՑ

Փոխառութիւն A. Սերի	46	
» B. »	27	
» C. »	21	20

ԲԱԺՆԵՑՈՒՄՔ

Սօսիէթէ ժէնէրալ..... Ադել. Լր	5	10
Քրեդի ժէնէրալ..... Լոնդ. »	10	5
Ղանդ ու Գազ..... » »	7	18
Սօս. Շանմէ եվլէրօր..... » »	5	6
Թրամուէյ..... » »	507	
Բանկի երկաթուղի..... Ֆր.	84	1/4
Բանկէթուղի Լաֆիթոմ.... Գ. կ.	146	

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

Օսմանեան ռոկի..... ղրշ. ...	100	
20 ֆրանքոց..... » ...	87	27
Անգլիական ռոկի ..... » ...	110	22
Մարք (գերմանական ռոկի)..... » ...	107	35
Իմպերիալ ..... » ...	90	30
Քրիմից ..... » ...	51	17
Ռուսի թղթադրամ ..... » ...	7	95
» արծաթ ..... » ...	78	
Մեճ. արծաթ. (տարբ) ..... » ...	108	12
Վիեննա ..... » ...	108	20
Լիզբոնց ..... » ...	108	10
Մելբուրնի ..... » ...	100	10
Թուսֆիչ ..... » ..	15	

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Բարիզ, 10 Յունիս, ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 3 %	92	45
» » 4 1/2 %	106	65
Օսմանեան քոնսոլիտէ Սերի Դ.	19	70
Օսմանեան երկաթուղի	85	
» Բէմիի բաժնեթուղթ	—	—
Ղանդ Օթոման	617	50
Գրեքէ Լիոնէ	752	50
Իտալական Ռանթ 5 %	97	15
Շիլլէնական 5 %	491	25
Բրիտանէ Թիւրք (1890)	550	
Եգիպտական միացեալ	495	
Ղանդ ու Բարի	848	75
Օսմ. մնաց. արժէթուղթ	—	—
Սուէզի ջրանցք	2365	
Սպանական արտաքին	77	3/4
Զէր Լանտրայի վրայ	25	20

Լոնտոն, 10 Յունիս, ժամ 5 վայր. 15 երեկոյ

Անգլ. քոնսոլիտէ	97	7/16
Օսմ. » Սերի Դ.	19	5/8
» » » Ա.	46	
» » » Բ.	27	
» » » Գ.	19	5/8
Փոխառութիւն 1877	104	1/2
Ղանդ Օթոման (ինգիլիզ)	14	1/2
Եգիպտական միացեալ (ինդիֆիչէ)	98	1/4
» առանձ. (բրիվիլէժիէ)	104	1/8
Ցայլա Սանիէ	86	3/4
Ցօանիսպուրկ (փոխառ. Լոնտրա)	103	1/2
Շիլլէնական 5 %	96	1/2
Մոնոբոլ »	81	1/4
Ռուսական 1889	99	
Փոխառութիւն Բարիզի վրայ	25	38 1/2
Վիեննա, 10 Յունիս, ժամ — վայր. —		
Օսմանեան երկաթուղի	89	20
» Բէմիի բաժնեթուղթ	124	37 1/2
Փոխառութիւն Լոնտոնի վրայ	117	25
Պերլին, 10 Յունիս, ժամ — վայր. —		
Փոխառութիւն Լոնտոնի վրայ	20	23
Բուղղ թղթադրամ	235	75
Օսմանեան երկաթուղի	83	30
Օսմանեան քոնսոլիտէ Սերի Դ.	19	50

ՆԱԲՈՒԼԻԻ ԻՇԽԱՆՆ

Ե՛Լ ԶՄԻԱՆԻՆ

Վաղուց լուր էր տարածուած, որ Իտալիոյ գահաժառանգ՝ Նէապոլսի Իշխան Վիկտոր Էմմանուէլը մտադիր է այցելելու Սեւանայ վանքն և Մայր Աթոռս Ս. Էջմիածնի։ Անցեալ ապրիլի 21 ին Նորին Բարձրութիւնը երեկոյեան ժամանում է Ելենովկա գիւղն, Սեւանայ ծովի ափին և այնտեղ գիշերելու էր։ Երեւանի թեմի փոխանորդ Գեր. Սուքիաս Եպիսկոպոսը, թարգման իրան ունենալով Մայր Աթոռոյս ճեմարանի նկարչութեան ուսուցիչ Իտալիսօս մեծ. Պ. Վարդգէս Սուրէնեանցին և ներկայանալով Նորին Բարձրութեան՝ իր թեմի սահմանում նոյն Երեկոյ, ողջունում է Նորա գալուստն Օրարատեան աշխարհս ի դիմաց Նորին Օծութեան՝ Վեհափառ Հայրապետին ամենայն Հայոց հետեւեալ խօսքերով.

«Ձերդ Արքայական Բարձրութիւն.

«Բազդ ունենալով վայելելու Մեծին Իտալիոյ Գահաժառանգիդ Ներկայութիւնն մեր աշխարհումս՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ Քահանայապետի կողմանէ կը շնորհաւորեմ Ձերդ Արքայական Բարձրութեան ողջմբ եկաւորութիւնը, և ամենախոնարհ յարգանօք կը հայցեմ Ձերդ Բարձր բարեհաճութիւնը՝ շնորհաբեր այցելութեամբ պատուել Սեւանայ հինաւուրց միայնաւորաց անապատը և Արարատեան Մայր Եկեղեցի Ս Էջմիածին։»

Նորին Բարձրութիւնը շնորհակալութիւն է յայտնում և խոստանում անշուշտ այցելելու Ս. Էջմիածին և Նորին Օծութեան օրհնութիւնն առնելու, բայց Սեւան երթալը կախուած կը լինի եղանակից, որովհետեւ այդ երեկոյ եղանակը շատ անախորժ է լինում. հողմն, ալեկոծուած լիճն և ձիւնախառն անձրեւը յաջողութիւն չեն խոստանում դիտաւորութեան յաջողութեան։ Միւս առաւօտ պարզ երկինքն և խաղաղ օդն ամենքին ուրախութիւն են պատճառում, վանքի մեծ նաւակը գորգերով ու վայրի ծաղիկներով զարդարած՝ սպասելիս է եղել Ելենովկա գիւղի ծովեզրում։ Նորին Բարձրութիւնն իր ուղեկիցներով առաւօտեան 9 ժամին մտնում է նաւակն, որ բաց առագաստով և թիավարութեամբ միաբանից՝ ճանապարհ է ընկնում դէպի վանքը։ Քանի չափ այլ փոքրիկ նաւակներ, լիքը հայ գիւղական ժողովրդոց բազմութեամբ, երգով և տեղական երաժշտութեամբ ուղեկցում են Նորին Բարձրութեան։

Երբ Նորին Բարձրութեան նաւակը մերձանում է Սեւանայ կղզու ափին, շուրջառազգեստ միաբանութեան գլուխն անցած Սուքիաս Սրբազան եպիսկոպոսը դիմաւորում է Նորին Բարձրութեան հետեւեալ խօսքերով.

«Ձերդ Արքայական Բարձրութիւն.

«Սեւանայ անապատիս աղօթաւոր միանձունք յայտնելով Ձերդ Արքայական Բարձրութեան ամենախորին շնորհակալիք՝ այս գերազանց պատուոյ և շնորհաբեր այցելութեան համար սոյն խաղաղութեան և անդորրութեան սրբավայրը՝ քաղցր պարտականութիւն կը համարեն աղօթել առ Ամենաբարձրեալն Աստուած՝ պարգեւել Ձեզ երկայն և բարեբաստ կեանք՝ մեծին Իտալիոյ բազդաւորութեան և յառաջադիմութեան համար, որպէս զի նա միշտ իւր ձեռքումն ունեցած լուսաւորութեան վերածնութեան և անվրդով զարգացման դրօշակն բարձր պահպանէ յօգուտ ընդհանուր մարդկութեան, և խաղաղութեան հրեշտակն ուղեկից առնէ մեծ Գահաժառանգիդ Ձեր ամենայն տարաշխարհիկ ուղեւորութեանց ժամանակ՝ մինչեւ ողջմբ հասանիլն ի Հայրենիս՝ յուրախութիւն սրտի Նորա համօրէն որդւոց։ Ամէն։»

Պ. թարգմանը թարգմանում է Իտալերէն և Նորին Բարձրութիւնը Սրբազան փոխանորդի աջը սեղմելով՝ շնորհակալութիւն է անում։ Ապա միաբանութիւնը շարակարգ երգելով առաջնորդում է Մեծ Հիւրին եկեղեցին, ուր յարմարաւոր աղօթքն ու քարոզները կարդալից յետ՝ Սրբազան Սուքիաս Եպիսկոպոսը «պահպանիչ» ասելով՝ օրհնում է Մեծ Հիւրին և ժողովրդոց։ Սրանից յետ թագաժառանգ Իշխանը զննում է վանքի սրբութիւնքն ու հնութիւնքն, ապա բարձրանում է սարն, զննում է Առաքելոց եկեղեցին իւր հնութիւններով, որոնցից առանձնապէս գրաւում է Նորին Բարձրութեան ուշքը արանս փայտից շինած դուռն իւր գեղեցիկ փորագրութեամբ, որ յիշատակ է Աշոտի։ Իշխանը դուրս գալով եկեղեցուց՝ կանգնում եւ նայում է շրջակայքի վերայ և հիանում տեսարանի գեղեցկութեամբ։

Ապա իջնում են սարից և Իշխանն իւր ուղեկիցներով, տէրութեան կողմից նշանակած պաշտօնատարով ու Երեւանի Պ. Նահանգապետի հետ հրաւիրուում են նախաճաշի։ Իշխանն ընդունում է հրաւէրը։ Մի սենեակում առանձին սեղան նստուում են Մեծ Հիւրն, Սրբազան Փոխանորդն և թարգման. իսկ միւս սենեակում այլ հիւրերն եւ միաբանութիւնը։ Նախաճաշից յետ Նորին Բարձրութիւնը շնորհակալիք յայտնելով Նորին Սրբազնութեան և բոլոր միաբանութեան՝ մտնում է նաւակն ելենովկա վերադառնալու։ Այստեղ էլ Արժ. վանահայր կարապետ վարդապետը յայտնում է Նորին Բարձրութեան շնորհակալութիւն, որ բազդաւորել էր իրանց վանքն իւր այցելութեամբ։ Նաւակը շարժւում է և ճանապարհորդները յաջողութեամբ դառնում են Ելենովկա։

— —

Երեք շաբաթ չարունակ ամպամած երկինքն ապրիլի 23 ին պարզուեցաւ և երկու Մասիսներն իրանց ձիւնափայլ գագաթներից քօղը վերցրին և իրանց բոլոր փառահեղութեամբ ներկայանում էին այդ օրը հետաքրքիր նայողին։ Կարծես հէնց բնութիւնն ինքն հասկանում էր, որ օրը հանդիսաւոր է եւ Մայր Աթոռոյս և Արարատեան աշխարհին գալիս է այդ օրը մի Մեծ Հիւր։ Հիւրը Իտալիոյ Թագաժառանգ, Նէապօլսի Իշխան Վիկտոր Էմմանուէլն էր։ Ժամը 11 ին եկեղեցու զանգակների ձայներն աւետեցին Նորին Բարձրութեան գալուստը։ Ս. Աթոռոյս վանքի պարսպի մեծ դուռը զարդարած էր ուռենու ճիւղերով, այստեղից մինչեւ Տէրդատայ դուռը փռած էր կանաչ և պատերը կանաչ ճիւղերով զարդարած։ Տէրդատայ դռնից մինչեւ եկեղեցու մէջ Իշխանի տեղը՝ ճանապարհը ծածկած էր կարմիր մահուդով և զառ դիբայով։ Ժամը 11 ին Մեծ Հիւրի կառքը կանգնեցաւ Վանքի հրապարակում, ուր Լուսաւորչի հրապարակ Երեմիա Եպիսկոպոսը զգեստաւորուած՝ Ս. Աւետարանն և Աստուածածնայ պատկերն ի գիրկ եւ բոլոր միաբանքնայ պատկերն ի գիրկ եւ բոլոր միաբանքնայ շուրջառազգեստ խաչ ու խաչուառներով, երկու սարկաւագունք բուրուառներով և երգեցիկ խումբը՝ դիմաւորեցին Նորին Բարձրութեան։ Լուսաւորչի հրապարակ եպիսկոպոսն ողջունեց գալուստը։ Նորին Բարձրութիւնը երեսը խաչակնքելով խոնարհեց Ս. Աւետարանի եւ Աստուածածնայ պատկերի առաջ։

Ապա ճեմարանի աշակերտք ճանապարհի երկու կողմը շարէշար սկսան շարժիլ. նոցա հետեւում էին երգեցիկ խումբն և միաբանք երկշարք և Նորին Բարձրութիւնը Սրբազան լուսարարապետի կողքով։ Հանդիսականք Մեծ Հիւրի հետ մտան եկեղեցին։ Նորին Օծութիւն վեհ. Հայրապետն ազգիս զգեստաւորած, մի ձեռին խաչ կենաց փայտով և միւս ձեռքին հովուական գաւազանը, դիմաւորեց Նորին Բարձրութեան Իշման սեղանի առաջ և խաչակնքելով շնորհաւորեց և օրհնեց Նորա գալուստն հետեւեալ խօսքերով.

«Ձերդ Արքայական Բարձրութիւն.

«Մայր Եկեղեցիս Հայաստանեայց Կաթուղիկէ Ս. Էջմիածին սրբագումար դասուք հոգեւորականաց իւրոց՝ հոգեզուարճ ուրախութեամբ ընդ յառաջ ելանէ Ձերում Արքայական Բարձրութեան. իսկ մենք խորին յարգանօք ողջունեմք զփառաւոր գալուստ Գահաժառանգ Իշխանիդ Մեծին Իտալիոյ՝ յայս յարկ Սրբութեան։

Օրհնեա՛լ է Աստուած, որ ի ձեռն հրեշտակին խաղաղութեան անփորձ և անվնաս առաջնորդեաց Ձերում Բարձրութեան յայցելութիւն հնագարեան Տաճարիս։

Երանի՛ թէ՝ յաջողէր մեզ դոյզն ինչ լցուցանել զփափագ ցանկութեան սրտի Ձերոյ՝ մերովք նուիրական հնութեամբք, որք գանձին ի Մայր Աթոռոյս։

Օրհնեսցէ՛ Տէր Աստուած զմուտ Ձեր յայս աշխարհ Արարատեան, որ երկիցս հանդիսացեալ է խանձարուր մարդկութեան։

Օրհնեսցէ՛ Տէր Աստուած զառաքինի զկեանս Ձեր և զթագաւորութիւն Մեծին Իտալիոյ և բարեյաջող վերադարձ տացէ Ձերում Բարձրութեան ի հայրենի ժառանգութիւն Ձեր. ամէն։»

Մեծ. Պ. Վարդգէս Սուրէնեանց թարգմանեց Իտալերէն լեզուով և Նորին Բարձրութիւնը պատասխանեց. յայտնելով իւր շնորհակալիքն օրհնութեան և բարեմաղթութեան համար։ Երեմիա Եպիսկոպոսը ասաց «Սուրբ եկեղեցեաւս» քարոզը. Նորին Օծութիւնը «Ի մէջ տաճարիս» աղօթքը. ապա Սրբազան լուսարարապետը «Սուրբ խաչիս» քարոզն, որից յետ Հայրապետը «Պահպանիչ» ասելով՝ օրհնեց Թագաժառանգին Մեծին Իտալիոյ՝ Իշխան Վիկտոր Էմմանուէլին և Ներկայ ժողովրդոց։ Ապա երկու եպիսկոպոսունք առաջնորդեցին Նորին Բարձրութեան Մասանց խորանը, ուր սեղանի վերայ դրուած էին Աթոռոյս նշանաւոր Սրբութիւնքն, որոնց իւրաքանչիւրին յարգանօք մերձեցաւ Մեծ Հիւրն և իւր յիշատակարանում նշանակեց իւրաքանչիւրի անունն։ Տնտղեց և նշանաւոր զգեստներն. ապա մտաւ գաւազանց սենեակն, աստի Թանգարանն, ուր Նորին Օծութիւնը, զգեստը հանած, առաջ եկաւ Թագաժառանգ Իշխանին, որ շնորհակալութիւն յայտնելով՝ խնդրեց Նորին Օծութեան դառնալ Վեհարան և հանգստանալ։ Իսկ ինքը եկեղեցու ամէն մասերը զննելից և նշանակելից ու կարեւոր տեղեկութիւնները հարցնելից յետ՝ դուրս եկաւ եկեղեցուց, և շրջելով եկեղեցու շուրջը՝ նկատեց ամէն գերեզմաններն, եկեղեցու և զանգակատան փորագրութիւնք ու արձանագրութիւնքն և նշանակելով յիշատակարանում՝ գնաց Վեհարան։ Նորին Օծութիւնը դիմաւորելով Իշխանին՝ առաջնորդեց ծաղկեայ դահլիճն, ուր կարճ միջոց խօսելից յետ, Նորին Բարձրութիւնը յայտնեց ցանկութիւն գրադարանը տեսնելու։ Այստեղ էլ Նորին Բարձրութիւնը կէս ժամից աւելի մնալով՝ մանրամասնաբար զննեց նշանաւոր ձեռագիրներն ու նոցա նկարներն ու կարեւոր տեղեկութիւնքը գրելով յիշատակարանի մէջ, շնորհակալութիւն յայտնեց և վերադարձաւ Վեհարան, ուր ճոխ սեղան էր պատրաստած Մեծ Հիւրի համար։ Վեհարանի դահլիճում առանձին սեղան էր գցած Նորին Բարձրութեան և նորա ակիցների, Տէրութեան կողմից նշանակած պաշտօնակատար գաղտնի ներգործական խորհրդական Պ. Հաքքելի և Երեւանի Պ. Նահանգապետի համար։ Ճաշկերոյթի վերջին Նորին Օծութիւնն առաջարկեց Թագաժառանգ Իշխանի և սա փոխադարձաբար Նորին Վեհափառութեան կենաց բաժակներ, որոնք յետնակայս դատարկուեցան։ Ճաշից յետ Նորին Օծութիւնը առաջնորդելով Իշխանին և նորա ուղեկիցներին ծաղկեայ դահլիճն, օրհնեց և անձամբ կախեց Ն. Բարձրութեան պարանոցը ոսկեայ խաչ զմրուխտներով ընդելուզած և մէջ տեղում խոշոր ադամանդով, որոյ տակը շինած էր փոքրիկ պահարան կենաց փայտի մասունքի համար, յանձնեց նոյնպէս Իտալիոյ բոլոր արքայական գերդաստանի օրհնութեան կոնդակը։ Իշխանը յայտնելով իւր շնորհակալութիւնն Նորին Օծութեան օրհնութեան և սիրալիր ընդունելութեան համար, քանիցս կրկնեց, որ երբեք չի մոռանալ Նորին Օծութեան և Ս. Էջմիածինը։ Ապա իւր հրաժարականը տալով Նորին Օծութեան, Թագաժառանգ Իշխանը բուլվարով հետիոտս գնաց ճեմարան, ուր տեսուչ Արժ. Նահապետ աբեղայն դիմաւորեց Նրան եւ աշակերտք, որոնք դուրսը շարուած էին, սկսան երգել ազգային երգեր։ Իշխանը գլխարկը հանելով ամենքին ողջունեց եւ մտաւ ճեմարան, ուր տնտղեց գրադարանն ու հանդիսարանն։ Ապա մի քանի կարեւոր տեղեկութիւնք հարցնելով, իւր անունը ստորագրեց այցելուաց մատեանում, և շնորհակալութիւն անելով ճեմարանի վարչութեան՝ հրաժարեցաւ։ Աշակերտաց երգեցիկ խումբը մինչեւ կառքը երգելով ճանապարհ գցեց Մեծ Հիւրին։ Ժամը 3 1/2 ին գնացքն ուղղեցաւ դէպի Երեւան։

(Աբաբ)

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ Պ. ԴՐԱԿԿԻՍԻՆ

Կ. ՊՈԼԻՍ, 16 Մայիս

Դեռ դրիչ չառած կը խորհիմք թէ կ'արժէ՞ արդեօք պատասխանել Պ. Դրակկիսին իւր մայիս 2 թուականն և մայիս 14ի Աբեւելքի մէջ հրատարակեալ դիտողութեանց։

Եւ ի՞նչ են իւր դիտողութիւնք. դարձեալ ատիճանաց ցանկ, դարձեալ 2 սխալ ատիճանի եւ 3 սխալ պատուանշանի։ Մեք չբատուգեցինք անգամ թէ իրօք սխա՛լ են տրուած այդ ատիճանք կամ պատուանշանք, թէ՝ ի՛ւր ուղղութիւնք են սխալ։ Բայց ընդունելով հանդերձ թէ այդպէս ըլլայ, ի՞նչ կրնա կրնան ունենալ մի քանի սխալք ա՛յսքան բազմազան, 350 է աւելի երեսներով և հազարումէկ տեղեկութեամբք և ծանօթութեամբք ճոխ գործի մը մէջ։

Միշտ Կօթա ալն. կը ցուցնէ մեզ իրը փաստ, բայց կը կրկնեմք և ի հարկին կրնամք հաստատել թէ Կօթայի սխալները միաւորներով կարելի չէ հաշուել։ Այս կը ցուցնէ թէ կատարեալ անսխալ լինելու յաւակնութիւն չկրնար ունենալ այս օրինակ գործ մը միշտ փոփոխութեանց ենթակայ և որոյ ծանօթութիւններն հարկ է քաղել շատ մը այլազան աղբիւրներէ ինչպէս Սալնամէ, Կօթա, Զէրվաթի եղբարց Տարեցոյց, Էջմիածին, Երուսաղէմ, Ազգ. Պատրիարքարան, Ուսումնական խորհուրդ, թաղային խորհուրդ, ընկերութիւնք և այլ և այլ հաստատութիւնք, շրջենաւային զանազան ընկերութիւնք, հեռագրատուն և թղթատուն, երկաթուղեայ ընկերութիւն ևն. ևն.

Միտգելի է որ այս ատիճանաց ցանկին մէջ, ուսկից դուրս չկրնար ելնել, գտած մի քանի սխալներով, եթէ սակայն սխալ են անոնք, ամբողջ գործը վարկաբեկ ըրած ըլլալ կը կարծէ, և կը ցաւի, շատ կը ցաւի զի չկայ մէկը որ օգուտ քաղէ իւր քննադատութենէն և մոցա՛ից հանդիսանաց մէջ։

Գործ մը քննադատած ըլլալու համար, ընդհանրապէս, հարկ է խօսիլ անոր ամբողջութեան, պարունակութեանց, ուղղութեան, լեզուին, ոճոյն, բաժանմանց, այլ և այլ մասանց ևն. վրայ ցուցնելով թէ՝ ուղղելի և թէ լաւ կողմերն, եթէ կան, իսկ մեր գործը մասնաւորապէս այնքան բազմազան, ծաղրելի է քննադատած ըլլալ կարծել, ըսելով թէ «մարքը չէ դրուեր, այս ինչը Միւթէմալիզ պիտի ըլլայ եւ այս ինչը ունի 3 մէֆիտիյէ...»

Մեք քննադատութենէն չեմք վախնար ամենեւին, ընդհակառակն դիտմամբ գնահատել զայն և օգտուիլ անկից, բայց քննադատութիւն մը լուրջ, արդար, անկողմնակալ։

Կ'ըսէ թէ ամբողջ օրացոյցը աչքէ չէ անցուցած։ Եթէ ոչ առաջին անգամ, գոնէ այս անգա՛մ ալ չկրկտեց զայն նորանոր սխալներ գտնելու տենչէն չարչարեալ։ Մնաց որ ի՞նչպէս կարելի է սխալ գտնել բուն օրացուցին, այսինքն առաջին երեսներուն մէջ, Այ՞որ գ՞ոի ևն ատիճանաց ցանկին մէջ՝ երես 151է 172, և դրամից ցանկին մէջ՝ երես 307, առանց ամբողջութիւնը աչքէ անցուցած ըլլալու. բայց պահ մը հաւատանք։ Եթէ իրօք չէ քննած զայն, ահա՛ ապարէզ կը կարդամք իրեն, թող բոլոր օրացոյցը աչքէ անցունէ և հապարակաւ ցուցնէ մեզ այն քաղ-ռեր սխալները որովք լեցուն է կ'ըսէ մեր գործը պարզապէս ենթադրութեանց վրայ հիմնելով և ոչինչ կարենալով հաստատել։

Եթէ պիտի պատասխանէ մեզ թէ «ոչ ժամանակ ունի և ոչ ձեռնհասութիւն դ-ոյ բ-ռ ընելու», ինչպէս կը գրէ իւր յօդուածի մէջ, այս փախուստ է կորակոր։ Պէտք չէր որ հրապարակ իջնէր քննադատել գործ մը որոյ մասին իւր անձեռնհաս ըլլալը կը խոստովանի, և ժամանակը զոր գրաւ խծծանօք երկար յօդուածներ գրելու, լիուլի կը բաւէ իրեն լուրջ քննադատութիւն մ'ընելու։

Պ. Դրակկիսը կը յանդգնի խորհուրդ ալ տալ մեզ. «Քանի մը ղրուշը չ'ինայելով ամեն տարի մէկ մէկ Սալնամէ, Կօթայի օրացոյց, Զերվաթի եղբարց հրատարակութենէն գնեցէք» կ'ըսէ, առանց գիտնալու թէ այդ ամենէն կ'ստանամք ամէն տարի, բայց շատ դոյզն մաս մը կրնամք քաղել անոնցմէ որովհետեւ Սալնամէն կը հրատարակուի 8 ամիս յառաջ և միւսներն 10 ամիս, և դիւրին է խորհիլ թէ ա՛յսքան միջոցի մէջ օ՛րքան փոփոխութիւններ կը պատահին։ Արդէն մեր հրատարակութիւն մեծաւ մասամբ ներքին, ազգային վիճակագրութիւնն է և կը պարունակէ այնպիսի տեղեկութիւններ զոր չեմք գտներ ուրիշ ոչ մէկ հրատարակութեան մէջ։

Կրնա՞յ ցուցնել մեզ տարեցոյց մը որ գնէ վիճակագրութիւն մեր ազգային իշխանութեան, Պատրիարքարանի եւ նորա պաշտօնէութեան, երեսփոխանութեան, կրօնական և քաղաքական ժողովոց, Տեսուչ խորհրդոց, թաղական խորհրդոց, Եկեղեցեաց, վարժարանաց եւ նոցա պաշտօնէից, աշակերտաց եւ ծախուց, Էջմիածնայ եւ միւս կաթուղիկոսութեանց եւ նոցա թեմերէից, Երուսաղէմի եւ մեր բոլոր վանորէից, մեր հիւանդանոցի և նոցա մատակարարութեան և մեր զանազան բարեգործական հաստատութեանց, և ասոնցմէ զատ շրջենաւային ընկերութեանց, թղթատարութեանց, երկաթուղեայ ևն. ևն. ևն.։

Ի դէպ կամ յանդէպս կը կրկնէ Սալնամէ, Կօթա, Զէրվաթի. բայց Սարնամէն ատիճանաւորաց ցանկը կը դնէ մինչեւ Ուլա էվվէլի, անկից վար Ուլա սանիսի, միւթէմայիզ ևն. չեն դրուած, իսկ Զէրվաթիի կամ Կօթայի մէջ ո՞սկից լսեր է թէ կայ թուրք ատիճանաւորաց ցանկ, ո՛ւր կը մնայ Հայոցն։

Դարձեալ կը կրկնեմք որ անհիմն է Պ. Դրակկիսին այն խօսքն թէ «սոյն օրացուցի վիճակագրական սխալք շատ տարիներէ հետէ կը քննադատուին, բ-ոյ բ-ոլ-ոմ ը-ը դ-ոնէ։» Իւր առաջին յօդուածով գրած այս խօսքն այն անգամ կրկնելու առթիւ հոգ տարած է վերջին տողը ջնջել, արդեօք զգալո՞վ թէ այդ խօսք իւր դատապարտութիւնը պիտի ըլլայ։

Առ այս իւր յառաջ բերած միակ փաստը սա է. «կը յիշեմ ասկէ շուրջ 10-15 տարի յառաջ Արամեան օրացոյցին դէմ քննադատութիւն մը ժամանակին Մ-ն-ներուն մէջ, յորում 10-15 տեսակ սխալներ նշանակուած էին։» Զեմք հասկնար թէ մեզ ի՞նչ վերաբերութիւն ունին Արամեան օրացոյցին 10-15 տարի յառաջ 10-15 տեսակ սխալները։ Ի՞նչպէս հասկցնենք թէ ընդարձակ օրացոյցը, զոր կը հրատարակեմք 7 տարիէ հետէ, չէ Արամեան օրացոյցը որ գոյութիւն չունի 13 տարիէ ի վեր։ Միտգելի չէ՞ մեզ վերադրել անոր սխալներն որովհետեւ անոր շատ քիչ նմանող գործ մը կը հրատարակեմք։ Ըստ այսմ նախապէս հրատարակեալ քիրականութիւնք եթէ սխալներ կը պարունակեն, զանոնք պիտի վերագրէ Մ. Դարագաշեանի, քանի որ սա ևս քիրականութիւններ հրատարակած է։

Եւ կը յաւելու. «Բայց ի՞նչ հեռուներն երթանք. Ա. Փ. էֆէնտին 1877 ի (շատ հեռու չէ՛, 10-15 տարիէն պակաս է,) օրացոյցին մէջ Ուլայի ատիճանի բարձրացած էր, յաջորդ տարին Միւթէմայիզի ինչա, արդեօք յանցա՞նք մը գործած էր և ատիճանէն վա՛ր ինկաւ, ո՛չ, այլ անշուշտ եղած մասնաւոր դիտողութեանց վրայ՝ օրացոյցի խմբագրութիւնը ուղղեց սխալը։» Ըսել է եղած դիտողութեանց վրայ օրացոյցի խմբագրութիւնը կ'ուղղէ եղեր իր սխալը, հապա ո՞ւր կը մնայ այն խօսքը թէ «սխալները կը քննադատուին բայց բարեփոխում չտեսնուիր։»

Խմբ-ութ-ութ-ն ընդ-ոյ-ն օրացոյցի
Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ ՏՊԱՐԱՆ
Պոլիս Սուլթան Համամ փողոց թիւ 14

ԴԱՐՄԱՆՈՒՄՆ

ԿԷԼԻՆՃԻՐԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ

Պատուաւոր ազգային մը որ ցարդ ձրիաբար դարմանած է բազմաթիւ անձեր, որք կէլինճիրի հիւանդութեամբ իրեն դիմած էին՝ և իր դեղերէն բոլորովին ապաքինած են, ամէն կողմէ արտայայտեալ փափաքանաց համաձայն՝ Զալաթիա Բէնչէնպիհ Բազար Զինճիրլի Խանի վերի յարկը թիւ 11 սենեակն յատկացուցած է իրեն, ուր պիտի ընդունի և դարմանէ կէլինճիկէ բռնուող հիւանդները։

Ադբասները ձրիաբար պիտի դարմանուին։ 478 7—15

ԱԶԴ

ԹՕՄԱՍ ՈՒԻԼՍԸՆ ԵՒ ԸՆԿ.
ՇԱՔԵՆԱՒԱՃԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Սէրենս չգենաւը, նաւապետ Փոլմանս, ընդհանուր վաճառքով Հըլէն աստհասաւ։

ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՍԷՐԱՍԲԷՐԻ

Գոսոլա Ֆըրդաի ասքէրիէսինտէ մէվճուտ հարմանաթ իլուն իւչ եիւզ ալթը սէնէսինտէ լուզումը օլաճագ օթուզ իքի գալէմ էշեահ մուլթապիյէնին իթասընա թալիպ օլանլարընը իշպու թարիխտէն իթիպարէն պիր հաֆթայա մագամը Սէրասքէրի լէվազիմաթ տարիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր։

29 մայիս 1890 527
Նո. 18 1—3

ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՍԷՐԱՍԲԷՐԻ

Եանեա վէ մուլհագաթը օլան մէվգրի ասքէրիէտէ պուլունաճագ ասաքիրը շահանէ իլուն միպպայիա օլունաճագ բուղէնը սատէնին ֆիյաթը մալիւմէսի իլէ թալիպլէրի էօհտէսինտէ օլուպ մայիսին օթուզպիրինճի կիւնի իհալէի գաթիյէսի իճրա դըլընաճաղընտան իթասընա թալիպ օլանլարընը մագամը Սէրասքէրի լէվազիմաթ տարիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր։

27 մայիս 1889 522
Նո. 13 2—3

ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՍԷՐԱՍԲԷՐԻ

Պիրինճի գըսըմ չափ վէ սըրա ալթըրդ վէ պէչլիք մէջէ էնվալի։

Պիրինճի գըսըմ կիւվերթէլիք օնլրդ, սէքիզլիք, պէչլիք, իւչլիք լաթա էնվալի։

Պիրինճի գըսըմ մայունա վէ նէմիչ սըրա գալասլարը էնվալի։

Պիրինճի գըսըմ չափ գօղուշ թահթալարը էնվալի։

Պիրիսճի գըսըմ սանտրդլը թահթալարը։

Ինչաաթը ասքէրիկ լազըմէսի իչուն իւչ եիւզ ալթը սէնէսի զայէսինէ գաստար ճէսթէթ ճէսթէթ ալընաճագ քէրէսթէնին գօնթրաթօյա բաալթը զըմէնտա պալատէ էնվալի մուհարբէր օլուուզը իւզրէ գըսըմ գըսըմ մէվգրի միւնագասայա գօնուլլարագ հազիրանընը իւչինճիւ

PHŒNIX FIRE OFFICE

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄՈՅԹ Անգղ. Ռոկի 1,000,000

"ՖԻՆԻՔՍ"

Հիմնեալ ի Լընտըն յամին 1782

ՖԻՆԻՔՍ, հիմնեալ առաւելքան մի դար յառաջ, սոսկ հրդեհի ապահովագրութեան ընկերութիւն մ'է՝ որոյ բաժնետէրք Անգղիոյ ամենահարուստ և հանրածանօթ դրամատէրեր են՝ ունենալով անսահման պատասխանատուութիւն։

ՖԻՆԻՔՍ ընկերութեան աշխարհահռչակ առատաձեռնութեան մի գլխաւոր ապացոյցն է 17,000,000 Անգղ. ոսկւոյ գումարն զոր ցարդ վճարած է հրդեհի զնասուց համար։

ՖԻՆԻՔՍ ընկերութիւնն կ'ապահովագրէ ընդդէմ հրդեհի և կայծական՝ իւր ուածք, կարասիք և ապրանք՝ յոյժ նպաստաւոր պայմանաց և միջնորդութեամբ ստորագրելոցս, որք ունիմք լիազօր իշխանութիւն կարգադրելու անմիջապէս մեր ապահովագրելոց կրած զնասներն։

Հ. ՍԻՄԱՆ և ԸՆԿ. ընդհ. գործակալք Կ. Պոլսոյ, Պուլկարիոյ և Սև ծովու եզերաց
Թիւ 12, Սանտալճը խան, Գալաթիա, Աւստրիական թղթատան վերեւ։

HAMBURG MUNICH UNITED

ՀԱՄՊՈՒՐԳ ԵՒ ՄԻՒՆԻԽ

ՄԻԱՑԵԱԼ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

Դրամագլուխ ֆռանք 8,000,000
Պահեստի դրամ ցվերջ յունիս 1889 » 5,604,722
Տարեկան հասոյթ » » » 12,773,779

Ընկերութիւնքս ՓՈԽԱԴԱՐՁ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ կ'ապահովագրեն մթերանոցներ և բնակութիւններ և սոցա մէջ գտնուած վաճառքներ և կարասիներ խիստ չափաւոր սակագնօք։

Լիազօր ներկայացուցիչ Կ. Պոլսոյ

ՖՈՒԱՆՔՖՕՐԹՈՒԱԶ

ԾՈՎԱՑԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Դրամագլուխ ֆռանք 6,250,000 Պահեստի դրամ ֆռանք 1,270,300

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւուց և առագաստանաւուց վրայ բեռցուած վաճառքներ, ինչպէս նաև թղթատարական և փոխադրական ընկերութեանց յանձնուած թանկագին նիւթեր և գրամ պարունակող ծրարներ խիստ նպաստաւոր պայմանաց և սակագնաց։ Սոյն նիւթերու վրայ մեծաքանակ գումարներ կարենալ ապահովագրելու համար Ընկերութիւնս միացած է եւրոպեան 13 լուրջ ապահովագրական հաստատութեանց հետ որոց դրամագլուխն ու պահեստի դրամն է Աւելի քան 100,000,000 ֆռանք

Լիազօր ներկայացուցիչ համայն Թուրքիոյ

ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, Պոլիս, Պահչէ—Գաքու, Անանիատիս խան.

11

ՎԵՑ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ ԻՆՔ Կ'ՏԱՐՈՒԱԾ

ԿԸ ՄՆԱՑ ՏԱԿԱՒԻՆ

ԵՕԹԸ ՄԻԼԻՈՆ ՖՐԱՆՔ ՇԱՀԵԼԻՔ

ՊԻՎԻԼԱՖՈՒԱ ԼԱ ՄԱԶԱՅԻ

Պարգեւաւոր պարտատոմսերով

Երաշխաւորեալ իտալական պետութեան արժէքներով որք Ամսդիոյ և Փոխատուութեանց Աբքայական Մնաւուկին յանձնուած են թիւ 2,504 և 14,614 ստացագրերու համաձայն

Այս ՊԱՐԵՒԱՒՈՐ ՆՈՐ ՊԱՐՏԱՏՈՄՈՒԹԻՒ Պէվիլաքուա լա Մազայի վերակազմալ փոխառութիւն, հաստատուած են Իտալիոյ Ռումպերթօ թագաւորին 1888 յուլիս 1 թուակիր հրովարտակով.

Փոխառութիւնը կը բաղկանայ 32,481,900 ֆրանք դրամագլուխ, բաժանեալ 2,452,000 պարտատոմսեր։ Զնչելի է 115 վիճակահանութեամբ՝ 1889 Մարտ 30ին մինչև 1938 դեկտեմբեր 31 ամսոյ 11 վիճակահանութեանց մէջ պիտի շահին

25 301 պարգեւներ պարտատոմսեր՝ 8,209,000 ֆր. արժէքով

Ակնկալ հանելով գոյացուած վեց վիճակահանութիւնները, կը մնայ տակաւին շահելիք 7 միլիոնի պարգեւ։

Իտալական կառավարութիւնը 1888 յուլիս 7 թուակիր նախաբարական զեկուցագրով հաստատած է Պետական Արժէթղթոց աւանդը, իբր լիուլի բաւական ապահովելու համար փոխառութեան գործառնութիւնքը։ Առ այս, Աւանդից և Փոխառութեանց Աբքայական Մնաւուկը ամէն վճարմանին Իտալիոյ թագաւորութեան ազգային Պանքային կը յանձնէ այդ արժէքներու տակաւ, պարգեւներուն վճարումն և արժէք թղթոց գլխավճարը ապահովելու համար։

Վերջին վիճակահանութիւնք տեղի ունեցան 1889 դեկտեմբեր 31ին, 500,000 ֆրանքի գլխաւոր պարգեւով մը, և 1890 մարտ 31ին՝ 250,000 ֆրանքի գլխաւոր պարգեւով մը.

ՏԱՐԻՆ ԶՈՐՍ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆՔ

1890ին — 1891ին — 1892ին

Մարտ 19|31ին — Յունիս 18|30ին — Սեպտեմբեր 18|30ին — Դեկտեմբեր 19|31ին

ՊԻՎԻԼԱՖՈՒԱ ԼԱ ՄԱԶԱՅԻ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐՈՒՆ ԳԻՆՆ Է

1 պարտատոմս 15 Ֆրանք.—10 պարտատոմս 145 Ֆրանք.—100 պարտատոմս 1,400 Ֆրանք

ՊԻՎԻԼԱՖՈՒԱ ԼԱ ՄԱԶԱՅԻ պարտատոմսք ի տես վճարելի են, հետեւաբար ամէն ժամանակ փոխանցելի են և դիւրաւ կը վճարուին։

ՊԻՎԻԼԱՖՈՒԱ ԼԱ ՄԱԶԱՅԻ պարտատոմսք կը կրեն Իտալիոյ Ռումպերդոյ թագաւորին ստորագրած հրովարտակին պատճէնը, արքայական պատուիրակին ստորագրութիւնը, Իտալական կառավարութեան հսկողութեան դրոշմն և վիճակահանութեանց յատակագիծը։

Վիճակահանութիւնք տեղի կ'ունենան ի Հռոմ, Նիւեմոնից նախաբարութեան մէջ, Իտալիոյ Ազգային Պանքային խնամքը որ փոխառութեան վարիչ անուանուած է մինչև ցվերջ, ի ներկայութեան Աբքայական պատուիրակին, որ պաշտօն ունի հսկել փոխառութեան և վիճակահանութեանց գործառնութեանց, յոյսուս արժէքաց։

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՐԳԵՒՔ

500,000 ֆրանք	250,000 ֆրանք	30,000 ֆրանք
400,000 »	200,000 »	20,000 »
300,000 »	50,000 »	6,000 »

և Նուազ կարեւոր ուրիշ շատ պարգեւք, ընդ. ամէնը 25,301 պարգեւք։

Պարգեւով կամ պարզ զլխավճարով շահած պարտատոմսից վճարումը կը լինի Իտալիոյ Ազգային Պանքային, իւրաքանչիւր վիճակահանութենէն ամիս մը յետոյ։

Ըստ որում արժեքորոց ամրոցութիւնը 32 000 000 Ֆրանկի դրամագլուխ մը կը ներկայացնէ, եւ պարգեւներուն զումարն ալ 8 միլիոնը կ'անցնի, հետեւաբար շահելու հաւանականութիւնը 4 ի դէմ 1 է։

Արժէքագրքի ինչպէս և վիճակահանութեանց ցուցակք կը գտնուին ԻՍՏԻՐԼ, ԷՃԷՆՄԻ, Քարաքէօյ, Տէյիրմէն խան, 14, Կ. Պոլիս։

37 12—16

ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՑԺ

Պիտի գտնեն ծերք, երիտասարդք եւ տղայք՝ եթէ միշտ գործածեն Տոքթ. Բրիճէսթ Անուշիչ Հիւթը

Այս պարարտութիւնն խանգաւեի դարմ մ, կէս գաւաթ ջրի մէջ լուծուելով, յառաջ կը բերէ ախորժահամ և ծառուցիչ բմպելի մը, որ կը գիւրացնէ մարսողութիւնն, զարմանալի կերպիւ կ'ամենդնէ մանուկներն և առողջ, զօրաւոր և հուժկու կ'ընէ զանոնք։

Մանկանց համար գործածութեան եղանակ

Տ. Բրիճէսթ Անուշիչ Հիւթէն խանգաւեի դարմ մ, փորը քանակութեամբ թարմ ջրի կամ կաթի մէջ լուծուելով, յառաջ կը բերէ մեծագոյն մը որուն վրայ պէտք է աւելցնել 90 տրամ եռացող ջուր կամ կաթ, հոգ տանելով խառնելու մինչեւ որ եռալ. կարելի է զայն գործածել նաեւ ծծակի մէջ։

Ախորժաբեր գաւաթած է այն մայրերուն համար որք քիչ կաթ ունին կամ բնաւ չունին։

Գնորդներէն կը խնդրուի լաւ որոշել թէ զաւեկ՞ն թէ մորը համար է։

Եթէ կ'ուզէք որ ձեր տղաքներն առողջ և քաջակազմ դրան, հարցուցէք Տր. Բրիճէսթ Անուշիչ Հիւթն որ կը գտնուի գործակալն քով.

ԷՖՖՐԻՆՆԻՆ ԳԱՐՊՈՆԱՆ
Վալլաթիա, Վրվոսա պահականոցին քով թիւ 95 և 97

69

ՖԷՐՆԷԴ—ՊՐԱՆԳԱՆ

Մասնաւոր բաղադրութիւն Միլանի Պրանգա եղբարց

Մատակարարք Իտալիոյ Արքայական Տան

Ոսկեայ շքադրամ՝ Բարիզի 1889ի Տիեզերական Արուեստահանդիսին մէջ.

Քան տարուան յաջողութիւն Իտալիա, Յունաստան, Ամերիկա, և Եգիպտոս—Շքադրամ 1885ի Անվերջայի, 1884ի Թուրինի, 1883ի Նեսի, 1881ի Մելբուրնի, 1888ի Մելբուրնի և Պրուսելի, 1879ի Մոնէլլի, 1878ի Բարիզի, 1876ի Ֆիլատելֆիոյ, 18 3ի Վիեննայի մեծ ցուցահանդէսներուն մէջը։

ՖԷՐՆԷԴ-ՊՐԱՆԳԱ առողջապահական ամենէն ծանօթ պիդերն է—Շատ բժիշկներէ կը յանձնարարուի իբր զգուշական դարմանական ճանապարհի երկիներու տենդերու, տարախիկ հիւանդութեանց և քոլերայի։

ՖԷՐՆԷԴ-ՊՐԱՆԳԱՆ կը դիւրացնէ մարսողութիւնը, կը հանդարտեցնէ ծարաւը, կը զրդռէ ախորժակը, կը բուժէ գլխու ցաւը, գլխու պտոյտը, ջղային ցաւն և մելամաղձութիւնը։

Այս ըմպելիքը, բոլոր ծանօթ պիդերներէն և ամէնքներէն դերազանց, կ'առնուի ամէն օր ճաշէն առաջ իբր ախորժաբեր, ձաշէն յետոյ, ապրելու մարսողական է։ կարելի է խառնել զայն վերմութի, գինիի, Լէյնի ջրոյ և խանգաւեի հետ.

ՖԷՐՆԷԴ-ՊՐԱՆԳԱՆ, ինչպէս և նոյն տան վերմութը, կը գտնուի գլխաւոր անուշաբարաց, նպարավաճառաց և գինեվաճառաց քով։

Թուրքիոյ համար կեդրոնատեղին է ՊՈՆՈՄԻ և ԻԼԳԷՐԻՍ

93

ԴԱՄԻԱՆՈՍ ՓԱՓԱՋԵԱՆ

211 . Կ. ՊՈԼԻՍ ՄԱՀՄՈՒԴ ՓԱՇԱ 211

Պատիւ ունի ծանուցանել իւր բազմաթիւ յաճախորդաց թէ, իւր խանութին մէջ կը պատրաստուին թէ՛ արանց և թէ կանանց յատուկ ամէն տեսակ գեղեցիկ կոշիկներ Ֆրանսական նիւթերով և Ֆրանսայէ բերուած վերջին նորաձեւութեանց համապատասխանող օրինակներու հաւանայն։

Պատրաստուած կոշիկները հետեւեալ վերջին գներով կը վաճառուին.

Պոթին կալոշ	ՂՐՇ 95	Պալատական կալոշ	ՂՐՇ 45
Պոթին	» 67	Կանանց մուճակ	» 40
Մոյկ	» 150	Կանանց սկարբին	» 45
Սկարբին	» 52		

291

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԳԱՌԼԸՄԱՆ ԵՒ ՊԼՈՒՄՊԷՐԿԻ

Ղալաթիա Պեօյուք Միլլէթ խան, Միջազգային թղթատարական վրայի յարկը

Այս Նշանաւոր գործատունն, որ արժանաւոր համբաւ մի ստացած է ի մեզ, այս ամրան եղանակին առթիւ իւր վաճառքներու քանակութեան վրայ յաւելումի կ'ընէ, որ արդէն բազմաթիւ է Ֆրանսական, Անգղիական, Կերմանական եւ Պելճիական բերքերու զանազան տեսակներով։

Հետեւաբար իւր բուն գործարանին ապրանքներուն վրայ որ. են՝ օժտի համար ամէն տեսակ ճարմանդներ, բռնուած, կիսազգեստք, քալիքօ, քրօշկ, թաշկինակ, անդանի պարոյք, շապկի, շապկնկեր, տաստանք, ֆլանել կանանց օրիորդաց և փոքր աղջկանց համար զարդազգեստներ, աւելցած է ուրիշ տեսակ ամերիկ. նիւթեր բոլորն ալ բնաբեր տեսակ։

Հասարակաց զարմանքը կը գրաւէ մանաւանդ այն վայելուչ և զանազան տեսակ վերարկուներն և ճաքեթներն կանանց օրիորդաց և տղայոց, որք բոլորն ալ վերջին նորաձեւութեան հանմանս ճարակով ու չքեղութեամբ յօրինեալ են։

Ցաւելուած մի ըրած է նաև ապպրուած զգեստներու պատրաստութեան նորաձեւութեան վրայ որ արդէն ծանօթ է այնքան, և իւր ընդարձակ արհեստանոցին շնորհիւ կրնայ կատարելագոյն գոհացնել բոլոր իւր յաճախորդները նոցա ճաշակին ու բաղձանաց համեմատ ի գործ դնելով ինչ որ ապրպրքին։ կը գտնուի նաև մինչեւ 16 տարեկան տղայոց համար ամէն տեսակ զգեստներ բալթօներ խիստ չափաւոր գներով։ կը ծախուին մեծ եւ փոքր քանակութեամբ.

ԱԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԳԱՑ

101

MERVEILLEUSE DÉCOUVERTE!

Plus d'ASTHME, Plus de SUFFOCATIONS

Les Papiers, les Poudres, les Cigarettes, à base de narcotiques, calment momentanément vos souffrances épouvantables, mais vous tuent sûrement.

ASTHMATIQUES!

Le SEUL CURATIF de l'ASTHME,
Le SEUL REMÈDE INOFFENSIF qui GUÉRIT, c'est la

LIQUEUR DE L'ÉTOILE

du Docteur Laston perfectionnée et préparée par Mario LECHAUX, Phᵉᵉ-Cᵉᵉ, 161, r. Ste Catherine, BORDEAUX

Une intéressante Notice, contenant tous les renseignements sur la médication et de nombreuses attestations de son efficacité, est envoyée gratis et franco à tous ceux qui la demandent.

DÉTAIL : Dans toutes les bonnes Pharmacies.

ԽԱՐԻԱԽ

ԿԵՆԱՑ, ԵԿԱՄՏԻՑ ԵՒ ՕԺՏՈՑ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ի ՎԻԵՆՆԱ

Գործողութիւնք 1889 Դեկտ. ամսուն

Այս ամսուան մէջ ստացուած և ստորագրուած են 8414 նոր մուրհակներ (բոլիս) որք կը կազմեն ապահովագրեալ գրամագլուխ. Ֆր. 5,117,407·50

Բաժիններու գանձ. » 432 287·03

Վճարեալ մահուանց առթիւ » 296,100 —

1888 դեկտ. 31ին երաշխաւորեալ հասոյթ, Ֆր. 88,469,460·35

Ամբողջութիւն ապահովագրեալ գումարաց, Ֆր. 434,419,824·71

Վճարեալ գումար » 152,322,584·88

Տեղեկութեանց համար դիմել առ ընդհանուր Գործակալարն Գ. ԼԻՈՆԷԼ ՊՈՆՏԻ, Թիւնէլի հրապարակ, տուն Մայէրի, երկրորդ յարկ. 27

Ընկերութեան սեղանաւորն է Գ. Ս. ԱՏԼԷՐ



Առաջնակարգ դեղագործ ի Փարիզ, ասպետ Պատուոյ Լեգիոնի, վարձատրեալ Բ. կարգի Մէտալիտիով, Բ. Ամերիկեան Իգզպոզիսիոնի։

ՁԵՐՄԱԿ ԵՒ ԹՈՒԽ

Մորու ձկան իւղը խորդանոցով զտելով, Գ. Շէվրիէ այդ հիւանդկին տուած է ախորժելի համ և հոտ, միանգամայն աւելցնելով անոր բուժիչ յատկութիւններն։

Այս դիտին պատճառաւ հնարիչը մեծամեծ վարձատրութիւններ ստացած է, միտալ և պատուոյ վկայական։

Ամբողջ աշխարհիս բժիշկք կը նախադասեն զայն ամէն տեսակներէն։

ԵՐԿԱԹԱՒՈՒՆ

Գ. Շէվրիէ իւր գլխաւոր կատարելագործած է եղանակ՝ որ ֆէրով Մորու ձկան երկաթախառն տիրոջ պատրաստելով։ Հակառակ այս յաւելման, իւղը դիւրաւ կը մարսուի և բնաւ պղգութիւն չպատճառեր։ Ուստի նախընտրելի է միւս բոլոր երկաթախառն պատրաստութիւններէն և յատկութեամբ կը գործածուի թոքախտի, Պրանշիթի, Վատութեան և Թոյլի համար։ Մանաւանդ կը յարմարի սերարակաղմ անձանց։

426

Ընդհ. մթերանոց, կեդր. դեղրն. Ն. ԹԷՕՏՈՐԻՏԷՍ, 241, Մեծ փողոց Բերայի, Կ. Պոլիս Միւնոյն դեղատան մէջ կը գտնուի նաեւ ՇԵՎՐԻԷԻ կանգրիշ ԳՈՊԱՑԻ ԳԻՆԻՆ

VICHY

ՍԷՆԳ-ԵՈՒԻ ԱՂԲԻՒՐ

կամ ԼԱՍԿՈ ՍԷՆԳ-ԵՈՒՐ, դեղագործ, Բլաս Լէ-քա, Վէյի

Ամէնէն թարմն և հեռուաւոր ամէնէն կազդիրն և փոխադրութեան մէջ ամէնէն նուազ անպայմանելին, գերազանց դարման ընդդէմ լեարդի, ստամոքսի և մէջքի հիւանդութեանց, աւազի և յոգացաւի Գինն է 50 շիլինգ օրնուկը 20 ֆրանք։ Կեղծերէն զգուշանալու համար, իւրաքանչիւր շիշի պիտակին վրայ գտնուելիս ստորագրութիւնը M. Lebeau Pharc.

ԿԵՂԻ. ԴԵՂԱՎԱՃԱՌԻ ԵՒ ՀԱՆՐԱՑԻՆ

428 ՋԲԵՐՈՒ Վ.ԱՃԱՌԱՆՈՒ 6—12

ԿԱՐԵՒՈՐ ԱՂԴ

ԱՆԱՊՆԱԲՈՒՅԾՆԵՐՈՒ ԵՒ ԵՐԿԱԳՈՐԾԱՑ

ՊՈԿՍԱՆՕՖԻ ԾԻԱԼԻՏԻ ՀԻՒԹ

ԳՈՐԾԱՐԱՆ Ի ՄՈՅԿՈՒԱ

Նոր դարման ընդդէմ արջառի՝ ինչպէս ձիու, եղջերաւոր անասնոց, ոչխարներու, շուներու մակաբոյծ ճրճիներու.

ԻԲՐ ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ. 200 ԼԻՏ 300 մասս ջրի խառնելիք և դուրսէն լուացք.

ԻԲՐ ԴԱՐՄԱՆ. 12 ԼԻՏ 150 մասս ջրի խառնելիք։ Այս չափով կ'ոչնչանան ճրճիներն և կ'ոչնչացնէ առնանոց վերքերը։ Նոյնպէս կ'անհետացնէ շուներուն յատուկ հոտն և թռչնոց փետուրներուն անկումը կ'արգիլէ։ Ոչխարներուն համար՝ կէս քիլօ հիւթ 50 լիտր ջրի մէջ։

ԻԲՐ ԱՂԲ. Իբր աղբ կը գործածուի տուչկերուն և պտղատու ծառերուն, կ'ոչնչացնէ ոջիլներն և թրթռուններն, և հետեւաբար կը դիւրացնէ տուչկին աճումը։ Որթատուչկերը 60 ԼԻՏ 80 մասս ջրի մէջ լուծուած ՊՈԿՍԱՆՕՖԻ ԾԻԱԼԻՏԻ ՀԻՒԹԻՆ, զերծ կը մնան ամէն տեսակ հիւանդութենէ և մինչեւ իսկ ՖԻԼՈՔՍԻՐԱՑԷ։

Պոկսանոֆի հիւթը 1/4, 1/2 և 1 քիլոնոց տուփերով կը ծախուի ի Գալաթիա, Խուրշուն խան, թիւ 18. 411

COMP. RUSSE

DE NAVIGATION A VAPEUR ET DE COMMERCE

ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՆԱՒԱՐԿՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՈՒՐԻ

Շաբթուան երթեւեկութիւնք

Օր	Ամսոյ	Ժ. Ր.	Երթ-ելք	Տեղիք	Նաւ
Բշ.	28.9	2 եր.	Օտէսա		Բսպոֆ
Գշ.	29.10	5 եր.	Աւէքսանդրիա		Քօրնիլոֆ
Դշ.	30.11	10 առ.	Անատօլու		Ազոֆ
Դշ.	30.11	10 առ.	Սեվաստոպոլ		Օլէկ
Եշ.	31.12	2 եր.	Օտէսա		Զիմոլոֆ

Մանրամասն տեղեկութեանց համար դիմել առ Գործակալութիւնն Ռուսական ընկերութեան ի Քիրլէմ Գաքու։ 136

ՇՈԳԵՆԱՒԱՐԱՍԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՄԱՐՍԻԼԵԱՆ

Ն. ԲԱՔԻՒ ԵՒ ԸՆԿ.

Մ-ր-ի-ա-ի և Բ-ր-ի դիշ- կանոնաւորագիրեալ

Սամսոն, Տրապիզոն, Պաթում և Նովորոսիսք երթալիք յատաջիկայ շոգենաւն է Մարսիլիայէն որ յունիս 11ին Մարսիլիայէն և յունիս 18ին կ. Պոլսէն պիտի մեկնի։

Բարիզ-Լիոն-Մարսիլիոյ երկաթուղեաց ուղեւորութիւնն ի միասին առնելով,

Ա. կարգ 300 Ֆրանք
Բ. » 220 »

Ուղեւորի և արտ ուղեւորութեան

Նաւագնացքի, ուղեւորութեան և այլ տեղեկութեանց համար

Դիմիլ առ գործակատարն ԹԻՄՈԹԷ ԲԸՂՈՒԼ

Թիւ 17-18 Բիւշիւք Միւկէթ

371 Մոմհանէ փողոց, Թիւ 14

Ապատնատէր Ս. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՑ